

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСТОРИИ

**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ  
(ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ)**

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA  
(SCIENTIFIC JOURNAL)  
ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ  
(НАУЧНЫЙ ЖУРНАЛ)

**2 (29)**

ՄԵԽՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ  
ՄԱՏԵՆԱՇԱՐ

256



ARCH.MESROB ASHJIAN  
BOOK SERIES

256

ԵՐԵՎԱՆ 2024

## **Տպագրվում է <<ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

### **Խմբագրական խորհրդուրդ**

Ա.Ա. Մելքոնյան (Նախագահ), Կ.Հ. Խաչատրյան (Նախագահի տեղակալ),  
Ա.Ի. Շահնազարյան (գլխավոր խմբագիր), Ա.Ռ. Խոսրոև (ԱՄՊ),  
Ա.Վ. Դումիկյան (ԱՄՊ), Խ.Ր. Գազեր (ԳՖՀ), Ա.Ա. Ռյանց (ԴԴ),  
Ա.Վ. Շոփին (ԴԴ), Ի.Վ. Կրյուչկով (ԴԴ), Հ.Ղ. Մուրադյան,  
Վ.Հ. Թորոսյան, Մ.Կ. Կոնինյան (պատ. քարտուղար)

### **Редакционная коллегия**

Ա.Ա. Մելքոնյան (председатель), Կ.Հ. Խաչատրյան (заместитель председателя), Ա.Ի. Շահնազարյան (главный редактор), Ա.Ռ. Խосроева (США), Ա.Վ. Դумикян (США), Խ.Ր. Գазер (ФРГ), Ա.Ա. Ոլոնյան (РФ), Ա.Վ. Շубин (РФ), Ի.Վ. Կրյուչկов (РФ), Ա.Ղ. Մурадян, Վ.Ղ. Տօրօսյան, Մ.Կ. Կոնինյան (отв. секретарь)

### **Editorial board**

A.A. Melkonyan (chairman of the board), K.H. Khachatryan (deputy chairman of the board), A.I. Shahnazaryan (editor-in-chief), A.R. Khosroeva (USA), A.V. Dumikyan (USA), H.R. Gazer (FRG), A.A. Ulonyan (RF), A.V. Shubin (RF), I.V. Kryuchkov (RF), H.Gh. Muradyan, V.H. Torosyan, M.K. Koninyan (executive secretary)

Պարբերականի հերթական համարում հրատարակվող հոդվածները սկզբնադրյութների, արխիվային նյութերի, մամուլի հրապարակումների, հայունի և համաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի վրա լուս են սփռում Հայոց հին և միջնադարյան, նոր և նորագոյն ժամանակաշրջանների պատմության առանձին հիմնահարցերի վրա:

**Տպ. - ISSN 1829-4596**

**Էլ. - ISSN 2953-8084** © <<ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2024

ГОАР Д. ВАРДУМЯН

Институт истории НАН РА, к.и.н., доцент  
Государственный университет имени В. Брюсова

gohar.vardumyan@gmail.com

ID 0009-0006-4120-9929

DOI:10.59523/1829-4596.2024.2(29)-3

**ВЗАИМОСВЯЗЬ РЕЛИГИОЗНОЙ И  
ГОСУДАРСТВЕННОЙ СИСТЕМ В ДРЕВНЕЙ  
АРМЕНИИ\***

**Ключевые слова:** Армянское Нагорье, государственные образования, Хайкиды, хайасские боги, пантеон Ванского царства, общеармянский пантеон, храмы, жречество, праздники.

**Введение**

На Армянском нагорье с древнейших времен формировались государственные образования – страны, в каждой из которых развивалась своя религиозно-культовая система, отражающая мировосприятие, мифомышление, идеологию социума. На каждом этапе своего развития содержание культовых систем определялось под влиянием разнообразных факторов светской и духовной жизни страны, а также взаимоот-

---

\* Представлена 24.X.2024 г., рецензирована 28.X.2024 г., принятая к печати 15.XII.2024 г.

ношениями между правящей элитой – царской династией и жречеством. Цель данной статьи – выявить взаимосвязь государственности и мифологии, начиная со времен образования первых пантеонов в странах Нагорья, и осветить последующие периоды развития культовых систем вплоть до принятия христианства в Армении, представив комплексно концепт религия-государство.

В исследовании в основном применяются историко-сравнительный и сопоставительно-аналитический методы, которые позволяют проследить процессы развития пантеонов и степень их зависимости от государственного устройства страны. Специального исследования с таким подходом к древним пантеонам до настоящего времени не проводилось, хотя в отдельных работах по языческой религии армян имеются краткие упоминания по данной теме, однако они не позволяют составить целостную картину.

Культово-мифологические системы древней Армении прошли определенные этапы исторического развития, обусловленные ходом политической истории, процессами этнического формирования и образования государства. На каждом этапе, переходя из тысячелетия в тысячелетие, эти системы приобретали характерные черты, отражающие связи между духовной и светской сторонами жизни общества, между правителями страны и богами пантеона.

### **Хайкиды: эпонимы армян**

В мифотворчестве армян особое место занимают древнейшие повествования, сохранившиеся в устной народной традиции в течение многих веков, вплоть до раннего средневековья, когда они были зафиксированы в исторической литературе

Золотого века. В «Истории Армении» Мовсеса Хоренаци они изложены в виде архаического эпоса, из которого мы узнаем, что славная победа патриарха Хайка и основание страны Хайк' (Hayq) стали фундаментом армянской государственности. Затем, благодаря победам Арама Хайкида и признанию соседними народами Хайк'-Армении как самостоятельной объединенной страны, происходит переход из доисторической эпохи к исторической, от догосударственного периода к зарождению государственности, завершившийся утверждением автохтонного армянского этнического элемента на территории Армянского нагорья (середина III тыс. до н.э.)<sup>1</sup>.

Хайк и Арам – не только герои исторической традиции и эпонимы армянского народа, но и мифологические образы. Хайк, как непобедимый божественный прародитель армянского народа, основатель и покровитель страны Хайк', олицетворяет светлые силы во вселенной. Он закрепил за армянским этносом его исконную территорию – Армянское нагорье, и определил начало его истории датой своей знаменательной победы в 2492 г. до н.э. В честь его сыновей и дочерей названы месяцы Хайкидского календаря. Как мифический охотник, Хайк изображен на небе в виде созвездия Ориона, а как непобедимый лучник символизирует воинственную красную планету Марс.

Арам, как и Хайк, эпический патриарх-праородитель армян, солярный бог, покровитель страны и народа, непобедимый военачальник могущественной армии. Одна из его мифологических параллелей – Арменос, друг и соратник предводителя аргонавтов Ясона из фессалийского города Армениона, которого греческая историческая традиция связывает с этнонимом

---

<sup>1</sup> Изложение нарративов см.: **Мовсес Хоренаци.** 1990, 17-28.

«армен» и топонимом «Армения»<sup>2</sup>.

Сказания о наапетах-первопредках армян – это мифологизированная история, отображающая сложнейшие этнические процессы начальной истории армян. Страна Хайк'-Армения, основанная эпическими патриархами Хайком и Арамом, представляла собой обширный армянский мир с определенными географическими границами, языком, культурой, т.е. основными компонентами, характерными для государства<sup>3</sup>.

### **Пантеон страны Хайаса: божества-покровители городов**

На следующих этапах (II-I тыс. до н.э.) в государственных единицах Армянского нагорья формируются пантеоны, в которых отчетливо видны образы богов и богинь, их иерархия, функции, посвященные им праздники, обряды, места поклонения и многие другие атрибуты. В XVI-XIII вв. до н.э., страна Хайаса, известная по хеттским надписям, была локализована в северо-западной и центральной областях Армянского нагорья и представляла собой этнополитическое образование с наследственной царской властью, городами, крепостями, развитым земледелием и животноводством, а также боеспособной армией с конницей и колесницами<sup>4</sup>.

Близкое соседство Хайасы с Хеттской державой привело к тесным контактам между ними и, как следствие, к появлению множества схожих черт в общественной жизни и

---

<sup>2</sup> Strabonis. 1915-1925, XI, 4, 8-9.

<sup>3</sup> Вардумян. 2022, 3-27, а также приведенная литература.

<sup>4</sup> Քույշի. 2004: Kosyan. 2015, 271-276; «Хайаса-Аззи являлась государственной единицей с большим военным потенциалом, поскольку она могла бороться с одной из могущественных в тот исторический период держав – со страной Хатти» (Казарян. 2023, 117).

культовых практиках. В одном из политических договоров между хеттским и хайасским царями упоминаются 14 хайасских богов, составляющих государственный пантеон. Культ этих божеств был сконцентрирован главным образом в городских поселениях, в которых почитались боги-покровители, выполняющие различные функции<sup>5</sup>.

Возглавляла хайасский пантеон верховная пара в лице бога грома и молнии, умирающего-воскресающего правителя подземного мира <sup>д</sup>U.GUR, и матери-богини, покровительницы плодородия и плодовитости <sup>д</sup>INANNA, за которыми следовали остальные божества с разными функциями. Громовой бог, своей боевой доблестью и молниеносными ударами, был символом защитника страны и победителя над врагами, тогда как богиня плодородия олицетворяла хозяйку, обеспечивающую обильный урожай и процветание общества.

Городскими покровителями являлись и остальные боги пантеона, что, вероятно, отражало часть культовой традиции. Обрядовый церемониал в Хайасе регулировался и возглавлялся жрецами, а верховным жрецом часто был сам правитель (как и в соседних странах), т.е. духовной кастой руководила светская власть, всячески поддерживающая служителей храмов<sup>6</sup>.

### **Пантеон Ванского царства: боги Халловых ворот (Дверь Мгера)**

Ванское царство (Аракат/Урарту, Биайнили) – держава,

---

<sup>5</sup> **Хачатрян.** 1971, 148, § 6.

<sup>6</sup> О хайасских богах см.: **Forster.** 1931, 6; **Капанян.** 1947, 84-99; **Խաչատրյան.** 1967, 71-79; **Զահորելյան.** 1987, 327-330; **Вардумян.** 1991, 65-70; **Քույշն.** 2005; **Казарян.** 2023, 102-114.

господствующая в IX-VI вв. до н.э. на Армянском нагорье, находилось в непрерывных войнах с могущественной Ассирией, что сыграло немаловажную роль в формировании культа. Урартский пантеон, канонизированный царем Ишпуин (825-810) и окончательно сформированный при его наследнике сыне Менуа (810-786), был зафиксирован на скале, известной как Врата Халди (позднее – Дверь Мгера), где упоминаются имена более чем 80 богов, богинь и святынь, а также указания на количество жертвоприношений в виде крупного и мелкого рогатого скота<sup>7</sup>.

Во главе пантеона стояла верховная триада богов с их супругами: Халди (<sup>D</sup>Hal-Die) и Арубани (<sup>D</sup>Waruba=(i)ne), Тейшеба (<sup>D</sup>Teišeba) и Хуба (<sup>D</sup>Hu-ba), Шивини (<sup>D</sup>Šiu=ine) и Тушпуэа (<sup>D</sup>Tušriuea). Эти боги были символами безопасности страны Биайнили и благосостояния народа, покровителями наук, искусств, ремесел, хозяйственных работ, урожая и всех добрых дел. Военная тематика пантеона, отражающая мощь и боеспособность Ванского царства, подчёркивалась военными функциями мужской части триады, где каждый бог-воин имел свои войска, которым приносились жертвы. Богини триады, в свою очередь, дополняли своих супругов, выполняя аналогичные функции, образуя с ними единое целое. Подчеркнутая милитаризация пантеона была обусловлена наличием сильной централизованной власти Ванского царства и необходимостью иметь боеспособную армию, что было связано с нахождением в длительных войнах с южным соседом

---

<sup>7</sup> О религии Ванского царства см: Lehmann-Haupt. 1926-1931; Пиотровский. 1944, 250-261; Пиотровский. 1959, 220-231; Zimansky. 1998, 85-99; Salvini. 1995; Հմայակյան. 1990; Բաղդյան. 2015; Գրեկյան, Բաղդյան, Տիրացյան, Պետրոսյան. 2018:

Ассирией.

В Ванском царстве на высоком уровне развивались различные отрасли культуры, особенно космографическая наука, что нашло отражение в религии. В религиозной практике также почитались Солнце в образе Шивини, Луна – Меларди или Шеларди (<sup>D</sup>Sielardi), Меркурий – Арди (<sup>D</sup>Ardi), Венера – Сарди (<sup>D</sup>Sardi), Марс – Тейшеба, Юпитер – Халди, Сатурн – Цинуарди (<sup>D</sup>Šinuardi)<sup>8</sup>.

В пантеоне нашли отражение многие явления, связанные с культом могущественного Халди: его оружие (пылающий меч, охраняющий древо жизни), величие, божественность, мужественность и сила, а также символы его власти, такие как флаг («дируши»), двери или врата, храм («суси»). Каждому из этих божеств приносилось в жертву определенное количество быков и овнов. Много жертв приносилось войскам Халди и Тейшебы. Это свидетельствует о сильной военизированной власти Биайнили, в обществе которого особым почетом пользовалась царская, военная и духовная триада.

Церемония коронации в Ванском царстве проводилась в храме бога Халди, под его покровительством, поскольку считалось, что он дарует власть править страной. Роль царицы и других знатных дам в жизни страны тоже была значительной, что находило отражение в пантеоне, где каждый бог упоминается в паре со своей богиней. Хозяйственная жизнь и общественные мероприятия сопровождались торжествами, в ходе которых под покровительством жреческого сословия приносились жертвы богам, с целью завоевания их благосклонности. Сложная система пантеона была разработана и упорядочена жречеством по указанию властей, что свиде-

---

<sup>8</sup> Հմայակյան. 1990, 37:

тельствует о значимости религиозного культа в укреплении могущества государства, единства и благополучия общества.

Жречество регулировало образовательную сферу и школы, в его ведении находились царские письма и надписи. Оно организовывало религиозные празднества, посвященные богам, и важные события для страны, поскольку в сознании народа существовало убеждение, что боги правят над всем и вся<sup>9</sup>.

### **Общеармянский пантеон: семейство богов и богинь**

В начале VI в. до н.э. образование древнеармянского объединенного царства способствовало формированию общеармянского пантеона времен династий Ервандиндов, Арташесидов, Аршакидов, который просуществовал вплоть до принятия христианства в 301 г. Царство Ервандиндов было довольно сильной страной, а в период правления Арташеса I (189-161) Великая Армения стала могущественным единым государством, которое при Тигране Великом (95-55) достигло масштабов великой империи. Объединение государства и усиление царской власти способствовали централизации культа в общеармянском пантеоне с определенной иерархией богов, сетью храмов и святилищ, обрядовой системой, осуществляемой жречеством. Общеармянский пантеон представлял собой древневосточную религиозно-культовую систему, отражающую исторические, социо-культурные, идеологические и другие процессы в жизни общества. В функциях богов можно заметить определенное влияние античной культуры с запада, и иранской – с востока, однако основа мифологических пред-

---

<sup>9</sup> Հմայակյան. 1990, 74-75:

ставлений восходит к местным культурам предыдущих эпох<sup>10</sup>.

Пантеон в основном представлял собой семейство божеств, во главе которого стояла верховная пара, за ними следовали дочери и сыновья, и все они покровительствовали разными сферами жизни общества. Отец богов Арамазд («великий, доблестный, всемогущий», «создатель неба и земли», «щедрым изобилием могучий»<sup>11</sup>) и великая госпожа Анait («слава и спасительница народа», «мать всякого целомудрия», «благотворительница всего рода человеческого, благодаря которой пребывает и живет наша страна Армянская»<sup>12</sup>) являются хранителями страны, обеспечивают благосостояние народа и покровительствуют над всеми и всем на небе и на земле. В ощеармянском пантеоне (как и в урартском) господствует военизированная триада в лице Арамазда, Анайт и Ваагна («храбрость от отважного Вахагна»<sup>13</sup>), к которым обращаются цари перед выходом на битву с врагом, возлагая надежды на победу.

За верховной парой следуют их сыновья и дочери, составляющие ранг главных богов. Каждый из них унаследовал от родителей определенные функции и характеристики: Астхик – богиня любви и красоты, Нане – покровительница материнства и домашнего хозяйства, Михр олицетворял солнце и справедливость. Поклонение верховным и главным богам отличалось богатством храмов и пышностью обрядов. Другие бо-

---

<sup>10</sup> Об общеармянском пантеоне см.: Ալիշան. 1895; Gelzer. 1896, 99-148; Աքելյան. 1941: Արելյան. 1975, 103-181: Մելիք-Փաշայան. 1963: Ավդարեցյան. 1969: Լիսիցյան. 1995: Վարդումյան. 1991, 103-125. Հարությունյան. 2000:

<sup>11</sup> Агатангелос. 2004, 37, 40, 57.

<sup>12</sup> Агатангелос. 2004, 37, 40, 57.

<sup>13</sup> Агатангелос. 2004, 57.

жества, примкнувшие к семейству, также имели различные функции: Тир – гонец и писец Арамазда, Аманор – покровитель урожая и новогоднего праздника, Ванатур – гостеприимный приютодатель паломников, Сандарамет – властитель подземного мира и т.п.<sup>14</sup>.

В Великой Армении культовыми центрами были такие крупные города, как Арташат, Армавир, Тигранакерт и многие другие. По всей стране строились храмы и капища, из которых достойны упоминания Дом Арамазда и Астих на горе Пашат (Васпуракан), храм Арамазда в Багаване, храм Анайт в Еризе (область Екехеац), где находилось золотое изображение богини, Комната Астхик и Ваагна в Аштишате, главное капище Нане в селении Тил (Даранахеац, Высокая Армения), единственный уцелевший после принятия христианства храм Михра в Гарни (Айрагат) и т.д. Значительным памятником является и Коммагенский пантеон царя Антиоха I Ервандуни на горе Немруд, где можно увидеть (в полуразрушенном от землетрясений виде) огромные статуи богов Арамазда, Ваагна, Михра и богини Анайт<sup>15</sup>.

В храмах отмечались праздники и совершались обряды, связанные не только с божествами, но и с военными победами царя, с государственно-политическими и общественно-хозяйственными достижениями страны. В празднествах участвовал весь народ во главе с царским семейством, придворными, светской и духовной элитой. Жрецы и жрицы проводили церемонию праздника под руководством верховного

---

<sup>14</sup> **Вардумян.** 1976, 78-91; **Вардумян.** 2012, 367-371; **Вардумян.** 2014, 3-19.

<sup>15</sup> Картографирование древних храмов см.: Հակոբյան. 2008, 133: **Вардумян.** 1991, 112-113 (вкладыш); **Vardumian.** 2010, 435; **Vardumyan.** 2017, 62-74; **Вардумян.** 2017, 584-593.

жреца. Во время праздника Навасард (11 августа) трубы в трубы в ознаменование нового года, затем проводились царские скачки и охота, военные учения, мирские мероприятия с выставлением летнего урожая, сопровождаемые пиршествами, народными песнями-плясками. Кульминацией праздника была церемония жертвоприношений богам, совершаемая жрецами под покровительством царя. Растения, животные и птицы приносились в жертву, дабы завоевать расположение богов и заполучить их милость для царя и для всей страны<sup>16</sup>.

Духовная элита была тесно связана с правящей светской властью и служила опорой царской династии. Верховным жрецом часто был сам владыка или приближенное ему лицо; известно, что сам Тигран Великий мог выполнять функции верховного жреца, а нахарарский дом Вахуни служил культу своего бога-покровителя Ваагна<sup>17</sup>. Под патронатом царя и светских вельмож, жречество формировало идеологию, занималось наукой и образованием, астрономическими и математическими исследованиями, устанавливало календарь праздников и торжеств, решало вопросы строительства святыни. Храмы обладали движимым и недвижимым имуществом, крупными земельными угодьями, в которых велось земледельческо-скотоводческое хозяйство, приносившее большие доходы<sup>18</sup>.

Культово-мифологическая система нашла отражение также в монетном деле: армянские цари чеканили монеты со своим

---

<sup>16</sup> **Петросян.** 2004; **Վարդպետյան.** 2013, 212-221: **Վարդպետյան.** 2020, 163-186:

<sup>17</sup> **Мовсес Хоренаци.** 1990, 67.

<sup>18</sup> О храмах и храмовых общинах см.: **Периканян.** 1958; **Саркисян.** 1960; **Կրկյալշարյան.** 1963, 55-66: **Կրկյալշարյան.** 1970:

изображением на аверсе и определенным мифологическим символом или сюжетом на реверсе, чаще всего в виде бога, богини, почитаемого животного или растения<sup>19</sup>. Наличие такой тематики на монетах было связано с представлениями о божественном происхождении царской семьи и божественном покровительстве над ее делами. В Армении, как и в других странах Древнего Мира, было широко распространено поклонение царям и царским предкам<sup>20</sup>. Выделение верховной пары в общеармянском пантеоне также является определенной данью царской чете, а наличие семейства богов свидетельствует о главенствующей роли царского дома, почитание которого нашло отражение в участии царя или его родственника в жреческих функциях.

## Выводы

Рассмотрение взаимосвязей между культово-мифологическими системами и государственными структурами в древней Армении указывает на то, что в III-I тыс. до н.э., состав пантеонов и культов, функции и иерархия божеств, посвященные им храмы и святилища, праздники и ритуалы были обусловлены процессами формирования и становления государственных единиц, взаимоотношениями между светскими и духовными прослойками в обществе. Пантеоны разных эпох отражали социальную структуру светского общества того времени. В них высшее место занимали верховные пары богов, за которыми следовали их родственные или главные боги, затем – второстепенные божества, под конец и божества относи-

---

<sup>19</sup> Тирацян. 1982, 90–95; Մուշեղյան. 1983, 11–70; Вардумян. 2018, 135–150.

<sup>20</sup> Саркисян. 1966, 3–26.

тельно низкого ранга. Все они находились в определенных взаимосвязанных отношениях не только в рамках культа, но и вне его – со светской частью общества.

Каждая группа богов отражала ключевые процессы формирования армянского этноса и государственности, становления армянского мира как самостоятельной исторической, политической, общественно-экономической и социокультурной единицы. Каждый из пантеонов функционировал в конкретный исторический период, в рамках одноименного государства, в определенной географической области, главным образом на территории Армянского нагорья. Существование этих систем сопровождалось уникальной для каждого этапа идеологией, формированием и развитием духовного сословия, строительством храмов и капищ, организацией обрядовой-праздничной жизни, и наконец, ролью жречества в культовом церемониале и в общественной жизни страны.

Духовные структуры, отражая верования и мифологические представления, выработанные обществом на протяжении веков, на всех этапах оставались зависимыми от светского строя, вместе с тем, укрепляли основы государства, особенно в военной обстановке, поддерживая порядок между элитами и народом. Жречество формировало идеологию, соответствующую интересам государства, правящей верхушки и социума, оно принимало участие в разных сферах жизни страны: в развитии экономики и торговли, в организации образования, наук, искусств, ремесел.

Взаимосвязь между государственными структурами и культово-мифологическими системами древней Армении сохранилась до принятия христианства. В эпоху средневековья эти отношения, естественно, претерпели значительную трансфор-

мацию, но, тем не менее, религиозная традиция, уже в новых формах и проявлениях, оставалась важнейшим фактором в управлении народом, государством и страной.

## ЛИТЕРАТУРА

**Աբեղյան Մ.** 1941, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուիու արձաններ, Երևան, «Արմֆան», 104 էջ:

**Աբեղյան Մ.**, 1975, հ. Է, Երկեր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 603 էջ:

**Ալիշան Դ.** 1895, Հին հայատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ – Ս. Ղազար, 523 էջ:

**Ավրայլեցյան Թ.** 1969, Միհրը հայոց մեջ, Հայագիտական հետազոտություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 487 էջ:

**Գրեկյան Ե., Բաղայան Մ., Տիրացյան Ն., Պետրոսյան Ա.** 2018, Բիայնիլի-Ուրարտու աստվածներ, տաճարներ, պաշտամունք, Երևան, «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ», 213 էջ:

**Լիսիցյան Ստ.** 1995, Հայրենի առասպելներից ու վեպերից, Երևան, «Արևիկ», 64 էջ:

**Խաչատրյան Վ.** 1967, Խեթա-հայկական դիցաբանական ընդհանրություններ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 8, էջ 71-79:

**Կրլյաշարյան Ս.** 1963, Դիտողություններ հայկական տաճարային քաղաքների ծագման վերաբերյալ, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», № 9, էջ 55-66:

**Կրլյաշարյան Ս.** 1970, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 214 էջ:

**Կրկյաշարյան Ս.** 1994, Քրմական դասը հին Հայաստանում, «Էջմիածին», «Մայր Աթոռ Սուլր Էջմիածնի» հրատ., էջ 84-96:

**Հակոբյան Հ.** 2008, Հեթանոսությունը Հայաստանում հնագոյն ժամանակներից մինչև մ.թ. III դար, Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երևան, Գեղդեղիայի և քարտեզագրության կենտրոն, էջ 133:

**Հարությունյան Ս.** 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգային», 527 էջ:

**Հմայակյան Ս.** 1990, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 158 էջ:

**Հմայակյան Ս. Գ.** 1981, Ուրարտական դիցարանի սրբությունները, ՀՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», № 4, էջ 205-210:

**Մելիք-Փաշայան Կ.** 1963, Անահիտ դիցուիու պաշտամունքը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 164 էջ:

**Մուշեղյան Խ.** 1983, Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 335 էջ, 43 թերթ նկ.:

**Վարդումյան Գ.** 1977, Հին հայկական դիցարանի համակարգումը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 8, էջ 68-77:

**Վարդումյան Գ.** 2013, Հայկազուները և Նավասարդյան տոնները, «Հայկազունիներ. առասպել և պատմություն», Երևան, «Գիտություն» հրատ., էջ 212-221:

**Վարդումյան Գ.** 2013, Հին հայոց դիցապաշտական համակարգը (համառոտ ակնարկ), ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Հայոց պատմության հարցեր», № 14, էջ 33-44:

**Վարդումյան Գ.** 2020, Ժողովրդական քրիստոնեության դրսնորումները հայոց տոնական կյանքում, ՀՀ ԳԱԱ

«Գիտություն» հրատ., «Պատմաբանասիրական հանդես», № 1, էջ 163-186:

**Քոսյան Ա.** 2004, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, «Զանգակ-97», 168 էջ:

**Քոսյան Ա.** 2005, Հայասայի աստվածները, KUB XXVI 39, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովրդներ, XXIV, Երևան, «Զանգակ-97», էջ 444-457:

**Агатангелос** 2004, История Армении. Перевод с древнеармянского, вступительная статья и комментарии К.С. Тер-Давтян и С.С. Аревшатяна, Ереван: «Наири», 336 с.

**Вардумян Г.** 1976, Государственные религиозные культуры армян, Вестник Московского университета. История. Москва, Изд. МГУ им. М.В. Ломоносова, № 2, с. 78-91.

**Вардумян Г.** 1991, Дохристианские культуры армян, Армянская этнография и фольклор, 18, Ереван, изд. АН Армении, с. 59-161 (монография).

**Вардумян Г.** 2012, Дохристианский пантеон. Армяне, Серия «Народы и Культуры», Москва, Институт этнологии и антропологии им. Миклухо-Маклая, Российская Академия наук, с. 364-371.

**Вардумян Г.** 2014, Бог солнца Миһр – покровитель добра и справедливости у армян, Вопросы истории Армении (научный журнал), Ереван, Институт истории НАН РА, № 15, с. 3-19.

**Вардумян Г.** 2017, Картографирование религиозно-мифологической системы древних армян, Вестник Ереванского гос. университета языков и социальных наук им. В. Брюсова, Ереван, «Лингва», № 1 (42), с. 584-593.

**Вардумян Г.** 2018, Древнеармянские монеты с мифологическими изображениями (краткий обзор), Stratum Plus, Археология и культурная антропология, Балансы истории: ценности и средства,

СПб-Кишинев-Одесса-Бухарест, № 6, с. 135-150.

**Вардумян Г.** 2022, Архаический эпос о зарождении древне-армянской государственности, Вопросы истории Армении (научный журнал), Ереван, Институт истории НАН РА, № 2 (25), с. 3-27.

**Казарян Р.** 2023, Хайаса (Аззи). Военно-политическая, культурная история и вопросы топонимики, НАН РА, Институт востоковедения, 146 с.

**Капанцян Г.** 1947, Хайаса – колыбель армян, Ереван, изд. АН Арм. ССР, 291 с.

**Мовсес Хоренаци** 1990, История Армении. Перевод с древнеармянского языка, введение и примечания Г. Саркисяна, Ереван: «Айастан», 291 с.

**Перикханян А.** 1959, Храмовые объединения Малой Азии и Армении (IV в. д.н.э. – III в. н.э.), Москва, изд. Восточной литературы, 187 с.

**Петросян Э.** 2004, Боги и ритуалы Древней Армении, Ереван, «Зангак-97», 288 с.

**Пиотровский Б.** 1944, История и культура Урарту, Ереван, изд. АН Арм. ССР, XII+364 с., 17 табл..

**Пиотровский Б.** 1959, Ванское царство Урарту, Москва, изд. Восточной литературы, 260 с.

**Саркисян Г.** 1966, Обожествление и культ царей и царских предков в древней Армении, «Вестник древней истории», № 2, с. 3-26.

**Саркисян Г. Х.** 1960, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, Москва, «Восточная литература», 159 с.

**Тирацян Г.** 1982, Армянская тиара: опыт культурно-исторической интерпретации, «Вопросы древней истории», № 2, с. 90-96.

**Хачатрян В.** 1971, Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики), Ереван, изд. АН Арм. ССР, 183 с.

**Forrer E.** 1931, Hajasa-Azzi, Caucasica, Fasc. 9, Leipzig, “Verlag der Asia Major”, s. 1-24.

**Gelzer H.** 1896, Zur armenischen Götterlehre, Berichte der

königlichen sächsischen Gesellschaft der Wissenschaften zu Leipzig,  
phil.-hist. Classe, xlviii, s. 99-148.

**Kosyan A.** 2015, Between Euphrates and Lake Van (on the Location of Hayasa and Azzi).- International Symposium on East Anatolia – South Caucasus Cultures, vol. I, Cambridge, p. 271-276.

**Lehmann-Haupt C.** 1926-1931, Armenien, einst und jetzt, Bd. 2, Hälften 1-2, Berlin, “B. Behr’s Verlag”, 568 s.

**Salvini M.** 1995, Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt “Wissenschaftliche Buchgesellschaft”, 257 s.

**Vardumian G.** 2010, La antigua religión y la mitología, Historia del Pueblo Armenio, Barcelona, “Originarte Diseño-impresion SL”, p. 431-435.

**Vardumyan G.** 2017, Some Issues of Mapping the Religious and Cult System of Ancient Armenia, Review of Armenian Studies, Yerevan, № 2 (14), p. 62-74.

**Zimansky P.** 1998, Ancient Ararat, A Handbook of Urartian Studies, New York, “Caravan Books”, 332 p.

**Գոհար Դ. Վարդումյան**, <<ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Կրոնական և պետական համակարգերի փոխհարաբերությունները հին Հայաստանում

## Ամփոփում

Հայկական լեռնաշխարհում Ք. ա. III-I հազարամյակի ընթացքում ձևավորվել են պետական տարբեր կազմավորումներ՝ Երկրներ, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր կրոնապաշտամունքային համակարգը: Այն արտացոլում էր հան-

րության աշխարհնկալումները, դիցամտածողությունը, գաղափարաբանությունը: Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում պահպանված Հայկյանների մասին դիցապատումներում արդեն ակնհայտ է անցումը նախապետական դարաշրջանից պետականության սկզբնավորմանը:

Այնուհետ, պետական պաշտոնական կրոնը հանդես է գալիս տարբեր փուլերում ծևավորված երկրների, մասնավորապես՝ Հայասայի, Վանի թագավորության, Երվանդունյաց-Արտաշեսյան-Արշակունյաց Հայաստանի դիցարաններում: Դրանք հավատքային համակարգեր էին, որոնք սերտորեն միահյուս էին աշխարհիկ-հասարակական կառուցներին: Պաշտամունքը սպասարկում, մշակում և կարգավորում էր հոգևոր դասը՝ քրմությունը, մեծապես ուղղորդվելով կառավարող իշխանությունների կողմից: Քրմության վերնախավը սերտ կապված էր աշխարհիկ իշխանությանը և արքայական հարստության նեցուկն էր, ավելին՝ գերագույն քուրմը հաճախ հենց միապետն էր կամ նրա նշանակած որևէ մերձավոր:

Հին Հայաստանում պետական և կրոնական համակարգերի փոխհարաբերությունների քննությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում երկրների ծևավորման ու կայացման գործընթացներով, հանրության մեջ աշխարհիկ և հոգևոր դասերի փոխառնչություններով էին պայմանավորված յուրաքանչյուր փուլի դիցարանի կառուցվածքը, պաշտամունքի արարողակարգը, աստվածների գործառույթներն ու նվիրապետությունը, նրանց ձոնված տոներն ու ծեսերը, տաճարաշինությունը և, առհասարակ, պաշտամունքային ավանդութակարգը:

**Բանալի բառեր՝** Հայկական լեռնաշխարհ, պետական կազմավորումներ, հայկյաններ, հայասական աստվածներ, Վանի թագավորության դիցարան, համահայկական դիցարան, տաճարներ, քրմություն, տոններ:

**Gohar D. Vardumyan, Institute of History of the NAS RA, Ph.D in History, Associate professor, V. Brusov State University, Relationship between Religious and State Systems in Ancient Armenia**

### **Summary**

In the Armenian Highlands, during the III-I mill. BC, various state formations emerged, each with its own religious and cult system that reflected the worldview, mythological thinking, and ideology of society. In Movses Khorenatsi's "History of Armenia", in the legends about Haykids, the transition from the pre-state era to the beginning of statehood is already evident.

Later, the official state religion appeared in the pantheons of the countries (particularly Hayasa, Van Kingdom, Orontid-Artaxiad-Arsacid Armenia) formed at different stages, which were not only belief systems, but also closely intertwined with secular social structures. The cult was served, regulated and developed by the priesthood, which was strongly directed by governing authorities. The spiritual elite was closely connected with the secular authorities, the priesthood was the support of the royal dynasty. Moreover, the supreme priest was often the ruler himself or a close person appointed by him.

The research of the relationship between the state and religious systems in ancient Armenia shows that during the mentioned period, the processes of state units formation, the relationship between the secular and spiritual classes in society, determined in each period the

structure of the pantheon and worship, the functions and hierarchy of deities, dedicated to them temples, feasts and rituals, and the cult tradition in general.

***Key words:*** Armenian Highlands, state formations, Haykids, Hayasan gods, pantheon of Van Kingdom, Pan-Armenian pantheon, temples, priesthood, feasts.

# ԱՐՏԱՇԵՍ Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ. գ. թ., դոցենտ  
artashesshahnazaryan.1950@gmail.com

ID 0009-0006-7000-5335

DOI:10.59523/1829-4596.2024.2(29)-24

## ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ\*

Բանալի բառեր՝ Զաքարյաններ, Օրբելյաններ, Օրբելիններ, Էլիկում, Իվանե Ա, Գոնգա, Սյունիք:

### Ներածություն

Հայաստանում զարգացած ավատատիրության շրջանի երկրորդ փուլի նշանավոր իշխանատուհմեր Զաքարյանների ու Օրբելյանների փոխհարաբերություններն առանձին դեպքերում իրենց ազդեցություն են ունեցել ոչ միայն հյուսիսարևելյան՝ Զաքարյան Հայաստանի, այլև վրացական թագավորության վրա, որի կազմում գտնվում էր վերջինս, ռազմաքաղաքական կյանքում: Հայոց պատմության մեջ դժվար գերազնահատելի դեր խաղացած այդ տոհմերի փոխհարաբերությունները ծայր են առել 1118 թ. կամ դրանից քիչ հետո, եթե Զաքարյանները դարձան Օրբելյանների նախնի Օրբելիննե-

\* Ներկայացվել է 14.XI.2024 թ., գրախոսվել է 14.XI.2024 թ., ընդունվել է դպրագրության 15.XII.2024 թ.:

թի ստորակաները և շարունակվել մինչև 1289/1290 թ.:

Զանազան գործոններով պայմանավորված՝ նրանց փոխհարաբերությունների քնութքը ժամանակ առ ժամանակ փոխվել է: Այդ հանգամանքն իր հերթին Զաքարյան Հայաստանի և, ընդհանրապես, վրացական թագավորության քաղաքական կյանքում որոշ փոփոխությունների առիթ կամ պատճառ է դարձել:

Քննվող հիմնահարցի մասին հայկական ու վրացական սկզբնաղբյուրներում զգալի տեղեկություններ են պահպանվել: Դրանք առավել շատ հաղորդել է Ստեփանոս Օրբելյանը: Սակայն, ցավոք, նա երկու տոհմերի փոխհարաբերությունները միշտ չէ, որ անաշառ է ներկայացրել: Խնդրո առարկա հիմնահարցն առ այսօր հատուկ քննության չի ենթարկվել, չնայած հայ և վրաց որոշ պատմաբաններ տարբեր առիթներով այս կամ այն կերպ դրան անդրադարձ կատարել են: Փորձենք գիտական պարբերականի ընձեռած հնարավորությունների սահմաններում հնարավորինս անդրադառնալ Զաքարյան և Օրբելյան իշխանատոհմերի փոխհարաբերություններին՝ հայ-վրացական սկզբնաղբյուրներում դրանց արձանագրվելու ամբողջ ընթացքում:

## **Զաքարյանների և Օրբելինների փոխհարաբերությունները**

Զաքարյանների և Օրբելյանների փոխհարաբերությունները սկիզբ առան դեռ վերջիններիս նախնի վրա-

ցական իշխանատուհմ Օրբելիների օրոք: Դա կապված էր Վրաց արքա Դավիթ IV Շինարարի (1089-1125) կողմից թուրք-սելջուկներից Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության նախկին տարածքը գրավելու հետ:

Ստեփանոս Օրբելյանի հավաստի վկայությամբ նա դրա մաս կազմող Լոռին, որտեղ Խոժոռոնի կենտրոնով փոքրիկ տիրուպթներ ունեին Կյուրիկյանների ստորակա Զաքարյանները, շնորհեց վրացական թագավորության առավել հզոր ավատատիրական տոհմերից Օրբելիներին: Նրանք տնօրինում էին արքունի կարևորագույն պաշտոններ՝ ամիրապասալարությունը (գորքերի գլխավոր հրամանատարությունը) և մանդատուրթ-ուխուցեսությունը (արքունի արարողապետությունը): Ստեփանոս Օրբելյանը նշում է, որ Դավիթ Շինարարն այդ պաշտոնները վարող և Օրբելիների տոհմը գլխավորող իվանե Օրբելուն շնորհեց «Լատէ իլր գաւառովն և Ազարակն՝ տեղի դարպասի»<sup>1</sup>:

Թուրք-սելջուկներից 1118 թ. հովհանն Լոռէ բերդի ու նրան մերձակա Ազարակի գրավումը<sup>2</sup> և Դավիթ Շինարարի մահը 1125 թ. հունվարին<sup>3</sup> թույլ են տալիս վստահ պնդելու, որ Զաքարյանների ու ի դեմս Օրբելիների Օրբելյանների փոխարաբերությունները սկիզբ են առել այդ միջակայքում: Առավել հավանական է, որ դա տեղի

<sup>1</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 379:

<sup>2</sup> Կարտլիս պհուրեա. 2008, 189.

<sup>3</sup> Կարտլիս պհուրեա. 2008, 202.

Է ունեցել կամ 1118-ին, կամ էլ դրանից քիչ հետո, քանզի Դավիթ Շինարարը Կյուրիկյան թագավորության նախկին տարածքը լիովին գրավեց 1124-ին<sup>4</sup>:

Զաքարյանների մեր սրբագրած տոհմածառի համաձայն այդ ժամանակ նրանց գլխավորում էր մեծ Սարգսի հայր ավագ Զաքարեն<sup>5</sup>, որը դարձավ Օրբելիների անմիջական ստորական: Այդ տոհմածառի քննությանն անդրադարձած < Մարգարյանն ավագ Զաքարեին մեծ Սարգսի պապը համարելով հանդերձ նկատել է, որ նա «եղել է առաջինը (Զաքարյաններից – Ա. Շ.), ով կապ է պահպանել Երկրամասի (Լոռիի – Ա. Շ.) նոր տերերի՝ Օրբելի իշխանների հետ»<sup>6</sup>: Բոլոր դեպքերում, անկախ Զաքարյանների տոհմածառում ավագ Զաքարեի գբաղեցրած տեղից, նա այդ տոհմի՝ Օրբելիների ստորական դարձած առաջին գլխավորն էր:

Ինչպես հետևում է հայ-վրացական սկզբնաղբյուրների անուղղակի և ուղղակի վկայություններից, Զաքարյանների և Օրբելիների դրանից հետո սկիզբ առած փոխսհարաբերությունները, հիմքում ավատատիրական ենթակարգությունն ունենալով հանդերձ, շատ սերտ էին:

<sup>4</sup>Հայաքումն պատմութեան. 1862, 119: **Սամուել Անեցի** և շարունակողներ. 2014, 208: Կարտլис պհօքրեա. 2008, 193; Հմմտ. **Մարգարյան.** 1980, 152:

<sup>5</sup> Շահնազարյան. 1990, 31:

<sup>6</sup> Մարգարյան. 2023, 125:

Վարդան Վարդապետն անդրադառնալով վրաց արքա Գեորգի III-ի (1156-1184) կողմից Շեղաղյաններից 1161 թ. Անին գրավելու հետ կապված անցքերին, նշում է, որ նա իր իսկ կողմից այդ քաղաքի կառավարիչ նշանակված Սաղուն իշխանին դավաճանության մեջ կասկածելով՝ փոխարինում է մեծ Սարգիս Զաքարյանով<sup>7</sup>: Թամար թագուհու առաջին պատմիչն իր հերթին հայտնում է, որ Գեորգի III-ն Անին գրավելուց հետո «այն պահպանելու և ամրացնելու նպատակով [այստեղ] թողեց Իվան Օրբելուն՝ մանդատուրթ-ուխուցեսին և ամիրսպասալարին, նրան օգնական տալով Սարգիս Մխարգրձելուն (մեծ Սարգիս Զաքարյանին – Ա. Շ.)»<sup>8</sup>:

Այսպիսով, վրաց պատմիչը Սաղունին լրության է մատնում, փոխարենը փաստելով Իվանե Օրբելուն Անիի ռազմական, իսկ նրա ստորակա մեծ Սարգիս Զաքարյանին քաղաքացիական կառավարիչ նշանակելը<sup>9</sup>: Դա պայմանավորված էր ոչ միայն վերջինիս հայ լինելով, այլև նրան, որպես իր տոհմի հետ սերտորեն կապված ստորակայի, այդ պաշտոնում տեսնելու Իվանե Օրբելու ցանկությամբ: Վերջին պնդման հիմքն է Թամար թագուհու առաջին պատմիչի կողմից մեծ Սարգիս Զաքարյանի «Օրբելիների եղբայր և սիրելի»<sup>10</sup> համարվելը:

<sup>7</sup>Հաւաքումն պատմութեան. 1862, 127:

<sup>8</sup>Կարլիս ცխօվրեბա. 2008, 245.

<sup>9</sup>Հմմտ. Լօրդկիպանիձ. 1974, 129; Մարգարյան. 1980, 105:

<sup>10</sup>Կարլիս ცխօվրեბա. 2008, 251.

Զաքարյաններ-Օրբելիններ ստորակա-գերակայական փոխհարաբերությունները խզվեցին իրենց փեսա արքայազն Դեմետրեին (Դեմնա) գահին նստեցնելու պատրվակով Գեորգի III-ի դեմ վերջիններիս գլխավորած ավատատիրական ապստամբության ժամանակ։ Այս հումկու ընդվզման օրերին ի թիվս այլոց «Դեմնայից հեռացավ Օրբելինների եղբայր և սիրելի Սարգիս Մխարգրձելին իր որդով և եղբորորդով։ Թագավորը նրան ընդունեց սիրալիր ու փաղաքաշ և ցուց տվեց նրա ազնվազարմությանը համապատասխան վստահություն»<sup>11</sup>։ Մեծ Սարգսի որդի և եղբորորդի ասելով Թամար թագուհու առաջին պատմիչը նկատի ունի համապատասխանաբար Զաքարե Բ-ին և Բլուզ Զաքարեին։

Զաքարյանների այս քայլն ավատատիրական ենթակարգության նորմերի կոպտագույն խախտում էր։ Սակայն նրանք մեծ Սարգսի գլխավորությամբ Դեմնայից, այսինքն Օրբելիններից հեռացան, երբ Վրաց արքայազնի աներ և ապստամբության ղեկավար Իվանե Օրբելին փոքրաթիվ ուժերով Լոռէ բերդում շրջապատվեց, իսկ մեծ Սարգսի աներձագ Ամիր Քուլողը Մահկանաբերդի գավառում նրա եղբայր, արքունի ախոռապետ Լիաբրիտ Օրբելոն պարտության մատնեց։ Դրանով ապստամբության ճակատագիրը վճռվեց, ինչը փորձառու ռազմական գործիչ մեծ Սարգսի Զաքարյանին ստիպեց

---

<sup>11</sup> Կարտլիս ցհօրեბա. 2008, 251.

լքել իր նկատմամբ խիստ բարեհաճ տրամադրված Օրբելիներին<sup>12</sup>:

Ապստամբությունը պարտության մատնելուց հետո վրաց արքան խստորեն պատժեց նրա ակտիվ մասնակիցներին, հատկապես Օրբելիներին: Մասնավորապես, իվանե Օրբելին կուրացվեց և զրկվեց պաշտոններից ու տիրույթներից, իսկ Օրբելիները գրեթե ոչնչացվեցին<sup>13</sup>: Ինչ վերաբերվում է Լիպարիտին, որ «գնացեալ էր առ աթարեկն Ելտկուզ երկու որդուվք՝ Ելիկուման և Իւանեի»<sup>14</sup> օգնական զորք խնդրելու, լսելով ապստամբության պարտության լուրը՝ «դադարեաց առ Ելտկուզին, և ... սակաւ աւուրս կեցեալ՝ մեռանի՝ յօտար աշխարհի»<sup>15</sup>:

Սյունյաց պատմիչի համաձայն, «ի հալածելն զՕրբելըն բաժանեաց զհայրենիս նոցա Գէորգի, զոմանս ետ թշնամեացն և մատնողացն, և զայլսն ետ Խփչախին, որ Խուպասար կոչիլու .... և մատոյց զնա ի զահ իշխանութեան նոցա և եղ սպասալար ամենայն Վրաց»<sup>16</sup>: Ճիշտ է, ապստամբության ճակատագիրը վճռվելուց հետո

<sup>12</sup> Այս իրողության հաշվառմամբ ապստամբության ճնշման գործում մասնավորապես մեծ Սարգիս Զաքարյանի եռանդուն մասնակցության մասին Գ. Գրիգորյանի պնդումը չի համապատասխանում իրականությանը (**Գրիգորյան**. 1981, 28):

<sup>13</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 389: Կարտլիս ցհօքրեბա. 2008, 213-214; Հայաքումն պատմութեան. 1862, 130:

<sup>14</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 390:

<sup>15</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 390:

<sup>16</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 390-391:

Գեղրգի III-ին հարած Զաքարյաններն այդ ժամանակ «թշնամիների և մատնիչների» ու Ղուբասարի նման Օրբելիների հաշվին տիրույթների ու պաշտոնների չարժանացան, բայց ասպարեզից վերջիններիս հեռացմամբ արագ վերելքի պայմաններ ստացան: Արդյունքում՝ Թամար թագուհու (1184-1207) օրոք նրանք դարձան ոչ միայն հայկական, այլև վրացական թագավորության ավատատիրական տների առաջատարը, մասնավորապես, տիրացած լինելով թե Լոռուն, և թե Օրբելիների նախկին պաշտոններից կարևորագույններին<sup>17</sup>:

### **Զաքարյանների և Օրբելյանների փոխհարաբերությունները նախքան մոնղոլական նվաճումը**

Իրաքի սելջուկյան սովորական վարչությունը փաստացի տնօրինող Շամս ադ-դին Ելտկուզ աթաբեկը Լիպարիտի որդի Էլիկումին շնորհեց Համիա քաղաքը, միաժամանակ դարձնելով Ռեյ, Սպահան և Ղազվին քաղաքների ամիր<sup>18</sup>: Գանձակի ճակատամարտում Էլիկումը սպանվում է, թողնելով Լիպարիտ անունով մանկահասակ որդի: Լիպարիտը մոր՝ Խաթունի հետ տարվում է Նախիջևան: Այստեղ մի մահմեդական բռնի ամուսնանում է Խաթունի հետ, և Լիպարիտը պատանդի կարգավիճակում ավելի քան տասը տարի մնում է նրա տանը<sup>19</sup>: Ստե-

<sup>17</sup> Կարլոս Շխօրեբա. 2008, 257, 266 և այլն:

<sup>18</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 392:

<sup>19</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 395:

փանոս Օրբելյանի վկայությամբ, երբ Մեծ Սարգսի որդիներ Զաքարե Բ-ն և Իվանե Ա-ն իրենց գլխավորած ազատամարտերի ընթացքում «մինչ տիրեցին այսմ աշխարհի ... սկսան յոյզ առնել եթե գոյ ոք յորդոցն Լիպարտի ի Պարսկաստան»<sup>20</sup>: Խաթունի քերի Ստեփանոս Եպիսկոպոսը Զաքարյան եղբայրներին տեղյակ է պահում Լիպարիտի գոյության մասին և նրանց թախանձագին խնդրանքով նրան մոր հետ փախցնում Վայոց ձոր<sup>21</sup>: Դրանից հետո Ստեփանոս Եպիսկոպոսը Լիպարիտին տանում է Իվանե Ա Զաքարյանի մոտ, որը նրան ուղախությամբ ընդունելով Թամար թագուհուն ու նրա որդի Գեորգի Լաշային (1207-1223) իրազեկում է Լիպարիտի իր մոտ գտնվելու մասին<sup>22</sup>: Հ. Մարգարյանը Սյունիքում Լիպարիտի հաստատվելը թվագրել է «Չուրջ» 1206-1207-ով<sup>23</sup>: Այս ընդունելի թվագրումն առաջարկելիս նա, անկասկած, հիմք է ընդունել այն, որ Թամարը մահվանից քիչ առաջ որդուն գահակից էր դարձրել: Հենց դրանով էր պայմանավորված նաև նրան Լիպարիտի մասին Իվանե Ա-ի տեղյակ պահելը:

Լիպարիտը, որին վիճակված էր սկզբնավորելու Օրբելյների անմիջական հետնորդ Օրբելյանների հայկական իշխանատուհմը և դառնալու Սյունիքում նրանց

<sup>20</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 395-396:

<sup>21</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 396:

<sup>22</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 396:

<sup>23</sup> Հայոց պատմություն. 2014, 237:

իշխանության հիմնադիրը, «յոյժ սիրեցեալ էր յաչս Իւանէի»<sup>24</sup>, որը Զաքարե Բ-ի մահվանից հետո գլխավորեց Զաքարյան իշխանատոհմը և դարձավ Վրացական թագավորության աթարեկը (թագաժառանգի խնամակալը) ու ամիրսպասալարը: Լիպարիտի նկատմամբ Իվանե Ա-ի տածած ջերմ վերաբերմունքի մասին է վկայում իր դուստր Թամթային նրան կնության տալու մտադրությունը, որով Զաքարյանների ու Օրբելյանների փոխհարաբերությունները խնամիական կապերով կամրապնդվեին:

Սակայն Իվանե Ա-ին կանխում է նրա ստորականերից Բոլբակ անունով հայտնի իշխանը<sup>25</sup>: Նա Լիպարիտին «խարեալ պատրող բանիք՝ ի ծածուկ փեսայացոյց ինքեան տալով նմա... օրիորդ Ատիայն, ընդ որ առ ժամ մի ցասուցեալ Աթարեկ Իվանէի»<sup>26</sup>: Լիպարիտին բարեհաճ էր վերաբերվում նաև Զաքարե Բ Զաքարյանը: Նա 1211 թ. Լիպարիտի «թախանձանօք» Օրբելյանների հոգևոր կենտրոն Նորավանքին է վերադարձնում Ազարակի ձոր գյուղը<sup>27</sup>:

Դառնալով Գանձակի Ելտկուզյան աթարեկության տիրապետությունից Սյունիքի ազատագրումը գլխավորող Իվանե Ա-ի գորակրամանատարներից մեկը, նա

<sup>24</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 353:

<sup>25</sup> Բոլբակի մասին տե՛ս **Մոլբաղյան**. 1977, 125-127:

<sup>26</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 397:

<sup>27</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 358-359:

մասնակցում է այդ երկրամասի համար մղվող մարտերին: Ճիշտ է, դրանցում Լիպարիտ Օրբելյանի խաղացած դերը նշանակալի է, բայց նրա թռո Սյունյաց պատմիչը գերազնահատել է այն, պնդելով, թե իբր «նա եղեւ առաջնորդ առման Սիւնեաց»<sup>28</sup>:

Ինչպես Սյունիքի ազատագրմանն օժանդակելու, այնպես էլ հայրենական, այսինքն, Օրբելիներից խլված տիրույթների դիմաց փոխհատուցելու նպատակով հվանեԱ-ն, ըստ Ստեփանոս Օրբելյանի «հրամանաւ թագաւորին (Գեորգի Լաշայի – Ա. Շ.) տայ փոխան հայրենեացն Լիպարիտի անանցական գրով զՀրաշկաբերդ իւր գաւառովն և այլ բազում գեղօրէս ի Վայոց ձոր, ի Կոտայսն զԼիառն և այլ գիւղս յոլովս. ի Գեղաքունի զՀամասարի և այլ գեղօրէս բազում, ի Կայեն զԱղստև իւր կերովն ... տայ և ի ձեռու նորա զՍիւնիս. զՈրոտն, զԲարկուշատ և զայլ բերդորէսն»<sup>29</sup>: Լիպարիտ Օրբելյանն իր հերթին Ամաղուի Նորավանքի սուրբ Կարապետ Եկեղեցու 1221 թվակիր արձանագրության մեջ Գեորգի Լաշային չհիշատակելով պնդում է, որ «մեծ աթաբեկ» հվանեն է «հայրենեացն փոխան... զՀրաշկաբերդ իւր կերովս»<sup>30</sup> իրեն տվել:

Սյունիքում Օրբելյանների իշխանության ստեղծման

<sup>28</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 397:

<sup>29</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 397:

<sup>30</sup> Դիվան հայ վիմագրության. 1967, 211: Հմմտ. Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 360:

հանգամանքներին քաջածանոթ Գ. Հովսեփյանն ունեցել է բոլոր հիմքերը պնդելու, որ դա տեղի է ունեցել «հիանէի ձեռքով»<sup>31</sup>: Այդ իշխանությունը Ենթակա էր Իվանե Ա-ին, իսկ Լիպարիտ Օրբելյանն էլ նրա «յոյժ սիրեցեալ» ստորական էր:

Նորավանքի սուրբ Նշանի (Խաչի) պատկանելության շուրջ 1216 թ. ծավալված իրադարձությունները Զաքարյանների և Օրբելյանների փոխհարաբերությունների պատմության ուշագրավ էջերից են: Օրբելյաններին պատկանող այդ սուրբ Նշանը գրավադրվելով պահպում էր Ածապ վանքում՝ Պետրոս անոնով Եպիսկոպոսի մոտ: Այդ մասին իմանալով իշխան Վասակ Խաղբակյանը սուրբ Նշանը վերջինից խելով նվիրում է իր գերակա Իվանե Ա-ին, որն այն պահում է Պղնձահանքում<sup>32</sup>: Սուրբ Նշանը վերադարձնելու նպատակով Նորավանքի Եպիսկոպոս տեր Սարգսիս դիմում է Լիպարիտ Օրբելյանին ու Բուբակ իշխանին, որոնք աջակցում են նրան ու դիմում Իվանե Ա-ին: Ի վերջո, Լիպարիտ Օրբելյանից ստանալով հազար դահեկան փրկագին, Իվանե Ա-ն իր դիվանի քարտուղար Օնոֆրեին հրամայում է սուրբ Նշանը հանձնել տեր Սարգսին, ինչը կատարվում է: Տեր Սարգսին այն տանում է Նորավանք և հաստատում այնտեղ<sup>33</sup>: Սուրբ Նշանն Իվանե Ա-ից ձեռք բերելու մասին

<sup>31</sup> Հովսեփյան. 1969, 26:

<sup>32</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 352-353:

<sup>33</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 353-354:

Լիպարիտ Օրբելյանը հիշատակել է Նորավանքի սուրբ Կարապետ Եկեղեցու վերոհիշյալ արձանագրության մեջ<sup>34</sup>:

Սակայն, սուրբ Նշանի պատկանելության շուրջ ծավալված վեճը դրանով չի ավարտվում, քանզի այն տնօրինելու հավակնություններ է դրսենում տեր Սարգսի դեմ ընդվզելով Սյունիքի թեմը մասնատած և Տաթևի Եպիսկոպոս դարձած տեր-Հովհաննեսը: Վերջինս ու տեր Սարգիսը Լիպարիտ Օրբելյանի ու նրա որդի Էլիկումի հետ գնում են Իվանե Ա-ի մոտ Դվին՝ դատաստանի: Սուրբ Նշանի պատկանելության շուրջ երկու Եպիսկոպոսների վեճը լուծելու նպատակով Իվանեն Դվինում ներկայացուցական դատական ատյան է հրավիրում<sup>35</sup>: Ատյանի վճոհի համաձայն «խաչ սեպհական էր Իւանէի, և ի տալն զնա ի Լիպարիտ և ի տէր Սարգիս բազում ծախութ մինչ ի 1000 դահեկան, Լիպարտի և իւր Եկեղեցւոյն (Նորավանքին – Ա. Շ.) է պարտ լինել յափ-տենական ժառանգութիւն»<sup>36</sup>: Ատյանի վճիռն արժանանում է Իվանե Ա-ի հավանությանը, և սուրբ Նշանն անվիճելիորեն ու առանց առարկության համարվում է «Լիպարտի և իւրոցն»<sup>37</sup>:

Սյունիքի ազատագրման համար մղվող մարտերի

<sup>34</sup> Դիվան հայ վիմագրության. 1967, 211:

<sup>35</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 355:

<sup>36</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 356:

<sup>37</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 356:

հարկադրական դադարից և, ինչպես երևում է Ստեփանոս Օրբելյանի մի վկայությունից, Օրբելյանների իշխանության ձևավորումից հետո, Լիպարիտ Օրբելյանը Գեղրգի Լաշայի ու Իվանե Ա-ի կողմից նշանակվում է կողմնակալ<sup>38</sup>, իսկ նրա տիրույթները վեր են ածվում սահմանապահ կողմնակալության: Կողմնակալ է նշանակվում նաև Վասակ Խաղբակյանը<sup>39</sup>: Այս հանգամանքը գալիս է փաստելու, որ իր ստորականներին վրացական թագավորության ավատատիրական աստիճանակարգում մեկ աստիճանով վեր բարձրացնելուն նպաստել է Իվանե Ա-ն: Լիպարիտ Օրբելյանի ու Իվանե Ա-ի սերտ փոխհարաբերությունների մասին է խոսում նաև, ի տարբերություն վերջինիս դավանական քաղաքականությունից դժգոհ հայ այլ իշխանների, Գառնիի ճակատամարտին Օրբելյան իշխանի մասնակցությունը<sup>40</sup>:

### **Ավագյան տան և Օրբելյանների փոխհարաբերությունները**

Իվանե Ա-ի մահվանից (1233/1234 թ.) հետո Օրբելյանները դարձան նրա որդի Ավագի՝ Զաքարյանների Ավագյան տուն կոչված տոհմաճյուղի հիմնադիրի ստորականները: Նախքան մոնղոլների 1236 թ. նվաճողական արշավանքն Ավագյան տան և Օրբելյանների գերակա-

<sup>38</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 397:

<sup>39</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 397:

<sup>40</sup> Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 399:

ստորակայական փոխհարաբերությունները շարունակում էին սերտ մնալ: Սակայն մոնղոլական նվաճման, ապա և տիրապետության շրջանում դրանց բնույթն արմատական փոփոխություններ կրեց: Դա ծայր առավ 1236 թ. ամունը մոնղոլների կողմից հյուսիս-արևելյան՝ Զաքարյան Հայաստանը գրավելիս:

կյանքին: Լևոն Աշոտի մի հրապարակումը լուս է սփռում պատրիարքական ընտրությունների վրա, որում վերակազմյալների թեկնածուն Եղիշե Դուրյանն էր<sup>2</sup>: Մեկ այլ հաղորդման մեջ լուսաբանվում էր Կ.Պոլսի հայոց ազգային ժողովի գործունեությունը<sup>3</sup>: Պարբերականն արձարձում էր նաև գաղթօջախներում հայ ինքնության պահպանման հարցը: Դրան էր նվիրված Մարկոս Նաթանյանի «Հայության ապագան» հոդվածը<sup>4</sup>: Այս հարցի համատեքստում է Ամերիկահայ ուսանողական միության երկրորդ ընդհանուր ժողովի հանդեպ «Արագածի» ցուցաբերած մեծ ուշադրությունը: Թերթը դրան նվիրել է մի ամբողջ համար<sup>5</sup>:

Ազգային խնդիրների նկատմամբ հայ ունենոր խավերի վերաբերմունքի հարցը միշտ եղել է վերակազմյալ հնչակյանների ուշադրության կենտրոնում: Հայ հարուստների կողմից հայրենիքի հանդեպ պարտականությունների կատարման հարցն է բարձրացված Վ. Շահրիմանի «Պարտականութիւն, այլ ոչ թէ ողորմութիւն» վերնագրով հոդվածում: Հեղինակը մասնավորապես գրում է. «Հայրենիքին սա կամ նա անկինը գտնող մէկ քանի դպրոցներ ու մէկ քանի ոսկի դրկելը բարեգործութիւն չէ, ատիկա ամօթալի կաշառք մըն է: Մենք դէմ

---

<sup>2</sup> Արագած. 1911, № 2:

<sup>3</sup> Արագած. 1911, № 1:

<sup>4</sup> Արագած. 1911, № 3:

<sup>5</sup> Արագած. 1911, № 8:

չենք մեր ունկորներուն, բայց երբ հայրենիքին հանդէա իրենց ունեցած պարտականութիւնը խոճմտօրեն չեն կատարեր, այլ ողորմելով անոր կը նուաստացնեն զայն, անհանդուրժելի կը գտնենք իրենց ընթացքը»<sup>6</sup>:

Ազգային խնդիրների շարքում քննարկվող ամենացավոտ հարցը թերևս 1909 թ. կոտորածից հետո Կիլիկիայի հայության դրությունն էր: «Արագածի» էջերում լայն արձագանք ստացավ Աղանայի պետական որբանոցի շուրջ ստեղծված վիճակը: Այստեղ օսմանյան կառավարության նպաստով պահվում էր 500 որբ երեխա, ուստի այն դիտվում էր որպես պետական հաստատություն: Պարբերականի անհանգույթյան բուն պատճառը որբերի կրթության հարցն էր: Այն պետք է ազգային քնույթ ունենար, իսկ դա կարող էր լինել միայն այն դեպքում, եթե Աղանայի որբանոցը դրվեր Կ. Պոլսի Ազգային պատրիարքարանի իրավասության տակ<sup>7</sup>:

Կիլիկիայի որբանոցների թեման արծարծվում է «Արագածի» նաև այլ համարներում, որտեղ «Կիլիկիոյ որբանոցները» վերնագրով հոդվածներ էր գրում Զապել Եսայանը<sup>8</sup>: Ազգային առաջընթացի հարցի շուրջ մտորումները վերակազմյալ հնչակյաններին բերում էր այն համոզման, որ դրա իրականացումն անխոսափելիորեն կապված է ազգային դաստիարակության հետ, այստե-

<sup>6</sup> Արագած. 1911, № 14:

<sup>7</sup> Արագած. 1911, № 11:

<sup>8</sup> Արագած. 1911, № 13:

դից էլ՝ «նոր սերունդ» ունենալու պահանջի առաջադրումը: Թերթի «Ողնաշարը» խմբագրականում Վ. Շահրիմանը գրում էր, որ հայ ժողովրդի գոյության կովում պիտի հաղթի «առողջ և կենսունակ դաստիարակությամբ մը արի, մեր նոր սերունդին Հայկը, որ մեր յոյսերուն ասպետը պիտի ըլլայ, մեր հաւատամքն է ասիկա»<sup>9</sup>:

Պարբերականի «Նոր սերունդ» վերնագրով խմբագրականում ցուց էր տրվում, որ «Ազգային վերածննդի գործը» հաջողությամբ առաջ տանելու համար անհրաժեշտ է նոր սերունդ, քանի որ հնին բնորոշ են եղել ստրկամտությունը, կորովի անկումը, հայրենասիրության բացակայությունը, իսկ այդպիսի հատկանիշներով ազգը չի կարող ազատագրվել: Խմբագրականը հայոց պատմության հերոսական օրինակներով հիմնավորում էր ազատագրության վեհ գաղափարին փարված մնալը<sup>10</sup>: Հարցի արձարծումը շարունակվում է «Արագածի» մի քանի համարների «Նոր սերունդ» վերնագրով խմբագրականներում<sup>11</sup>:

«Արագածի» էջերում սուր անդրադարձներ կան Օսմանյան սահմանադրության և Թուրքիայում բարենորոգումների իրականացմանը: «Բռնապետությունը եւ սահմանադրությունը Թուրքիոյ մեջ» խմբագրականում շեշտվում էր, որ Թուրքիայում շուրջ 3 տարի իշխող սահմա-

<sup>9</sup> Արագած. 1911, № 2:

<sup>10</sup> Արագած. 1911, № 3:

<sup>11</sup> Արագած. 1911, № 4:

նադրական կառավարության օրոք թեև երևութապես շատ բաներ են փոխվել, բայց «Հիմնական որևէ յեղաշրջում տեղի չէ ունեցած, առաջ միապետական բռնատիրութիւնը կար, իսկ իհմա՝ սահմնադրական բռնապետութիւնը»<sup>12</sup>:

Մտորելով 1908 թ. հեղաշրջման հարցի շուրջ՝ Լ. Հարենցը գրում էր, որ երիտթուրքերն այն իրականացրին ոչ այնքան քաղաքական ազատության հասնելու ձգտումով, որքան ազգայնամոլական նպատակներից ենելով: Քանի դեռ թուրք ժողովրդի և օսմանյան խորհրդարանի մեծամասնությունը տառապում է կրոնամոլության և ազգայնամոլական ախտով, հայ ժողովրդին երջանիկ ապագա չի սպասվում, եզրակացնում էր հրապարակախոսը<sup>13</sup>:

Հանրագումարի բերելով Թուրքիայի նախորդ և ներկա իշխանությունների գործունեությունը, «Օսմանեան խորհրդարանի Գ. Տարեշրջանը» վերնագրով հոդվածում Լ. Հարենցը գտնում էր, որ եթե սահմանադրության հոչակած սկզբունքների վրա ձևավորված ժողովը պիտի աչք փակի պետական հայացինց քաղաքականության ծրագրի վրա, ապա «ինչպէ՞ս հայ ազգը յուսալիր աչքրով նայի օսմանեան խորհրդարանի վրայ»<sup>14</sup>:

«Մամուլի արդի վիճակը երիտասարդ Թուրքիոյ մեջ»

<sup>12</sup> Արագած. 1911, № 16:

<sup>13</sup> Արագած. 1911, № 2:

<sup>14</sup> Արագած. 1911, № 20:

հոդվածում նա խոսում էր Երիտրուլքական կառավարության հաստատած խիստ գրաննության մասին<sup>15</sup>: Օսմանյան խորհրդարանի գործունեության և Թուրքիայում բարենորոգումների իրականացման հարցերի վերաբերյալ «Արագածում» հոդվածներով հանդես է եկել նաև «Արևորդի» ծածկանունով իրապարակախոսը<sup>16</sup>: «Բարենորոգման գործը Թուրքիոյ մէջ» հոդվածում նա գտնում էր, որ այդ խնդիրը չի լուծվում, որովհետև օսմանյան կառավարությունն ազգայնամոլ քաղաքականություն է վարում ոչ թուրք ժողովուրդների հանդեպ: Դա, ըստ նրա, անխոսաափելիորեն հանգեցնելու էր բախումների, ապստամբությունների, արտաքին միջամտության<sup>17</sup>: «Արագածի» ուղենիշներից մեկն էլ մշակութային կյանքի լուսաբանումն էր, որի բուն նպատակն ազգային մշակույթի քարոզչությունն էր հայ իրականության մեջ՝ հայկական մշակույթի ակունքներին և ավանդույթներին հավատարիմ մնալը:

### **Ազգային խնդիրները «Պահակ», «Հայկաշէն», «Արագած» պարբերականներում**

Վերակազմյալ հնչակյան մամովի վերազարթնումը տեղի ունեցավ 1917 թ., երբ Բոստոնում սկսվեց «Պահակ» թերթի իրատարակությունը: Այն դարձավ կուակցության

<sup>15</sup> Արագած. 1911, № 4:

<sup>16</sup> Արագած. 1911, № 5, 6:

<sup>17</sup> Արագած. 1911, № 3:

Ամերիկայի շրջանի պաշտոնաթերթը: Նշենք, որ ինչպես ասվեց, 1918 թ. «Ազգայնական-ազատական» անվանումը ստացած Վերակազմյալ հնչակյաններն իրավացիորեն գտնում էին, որ ռուական հեղափոխությունները և դրանց հաջորդած դրամատիկ իրադարձություններն ուղղակի ազդելու էին հայ ժողովրդի ճակատագրի վրա: Պատահական չէր, որ կուսակցության տպագիր օրգաններում մեծ տեղ էին գրավում այս թեմայով իրապարակումները<sup>18</sup>:

«Պահակը» հայ ժողովրդին զգուշացնում էր հեռու մնալ սոցիալական շարժումներից, գտնելով, որ դրանք մարդկանց ու ժողովուրդներին հեռացնում էին ազգային գաղափարներից և ազգի հավաքական շահերի գիտակցությունից՝ փոխարենը սերմանելով դասակարգային շահի առաջնայնության գաղափարը<sup>19</sup>: Ժերթը նշում էր, որ Ռուաստանի ժամանակավոր կառավարության ղեկավար Ա. Կերենսկին իրավացի է, գտնելով, որ Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի դուրսբերումն անխուափելիորեն հանգեցնելու է հայկական նոր կոտորածների<sup>20</sup>:

1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բոլշևիկյան ծայրահեղ գաղափարները մերժող Ազգայնական-ազատական կուսակցության օրգան «Հայկաշնը» Կով-

<sup>18</sup> Պահակ. 1917, № 67:

<sup>19</sup> Պահակ. 1917, № 72:

<sup>20</sup> Պահակ. 1917, № 72:

կասյան ռազմաճակատի փլուզման համար դատապարտում էր Անդրկովկասյան կոմիսարիատին, որը նրա կարծիքով գործնական քայլեր չկատարեց դա կանխելու համար: Թերթը քննադատում էր նաև հայ մենշվակներին, որոնք խուսափելով «նացիոնալիստներ» կոչվելուց, «ստրուկի համառութեամբ ջատագովում էին ոռւս մեծ հայրենիքը»<sup>21</sup>:

Ազատականներին մտահոգում էր հետպատերազմյան Հայաստանի ապագայի հարցը, որը կապվում էր Անտանտի պետությունների հետ: «Պահակն» անդրադառնալով պատերազմից հետո ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի և Մեծ Բրիտանիայի վարչապետ Լոյդ Ջորջի հայտարարություններին, եզրակացնում էր, որ ապագա հաշտության պայմանագրում «Հայաստանն եւ իր բաղդակից երկրները խաղաղութեան պայմաններէն մեկը կը կազմեն այլս եւ անոնք չպիտի վիճարկուին պատերազմէն առջևի վիճակին»<sup>22</sup>: Թերթը հույս էր հայտնում, որ «Ծոլոքիան պատժուի իր ոճիրներուն համար»<sup>23</sup>: «Պահակի» «Նուրիհան» ծածկանունով թղթակիցը «Մոտաւոր Արևելի փոկութիւնը» հոդվածում անդրադառնում էր պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած դժոխային տառապանքներին և հայությանը ամերիկյան հյուպա-

<sup>21</sup> Հայկաշն. 1917, № 1-2:

<sup>22</sup> Պահակ. 1918, № 103:

<sup>23</sup> Պահակ. 1918, № 103:

տոսների ու միսիոներների ցուցաբերած օգնությանը<sup>24</sup>:

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բոլշևիկյան Ռուսաստանի արտաքին քաղաքական ուղղությունը փոփոխվելունը լուրջ անհանգստություն առաջացրեց հայության շրջանում: «Հայկաշէնում» շեշտվում էր այն միտքը, որ թեպետ Վ. Լենինի կառավարությունն առանձին դեկրետով ճանաչել էր թուրքահայերի ազատ ինքնորոշման իրավունքը, բայց այն մնում էր սուկ հայտարարություն, քանի որ դրա կենսագործման համար իրական ուժ չկար: Ընդգծվում էր, որ Կովկասյան ռազմաճակատից ոռու զինվորների հեռացումը ու դրան հաջորդած թուրքական զորքերի առաջխաղացմանը մեծապես նպաստեց բոլշևիկների վարած քաղաքականությունը<sup>25</sup>: Էրգրումի անկման պատճառների մասին խոսելով «Հայկաշէնը» մատնացուց էր անում հայկական զորամասերի թույլ մարտականությունն ու ցածր կարգապահությունը, ազգի անոնից խոսող փառասեր, շահամոլ ու բախտախնդիր անհատների գործունեությունը, որն աղետավոր հետևանքներ թողեց<sup>26</sup>:

Ընդհանրապես նկատելի է, որ ազատական մամուլի հրապարակումներում հաճախ են արձարձվում հայ ժողովրդի ճակատագրում մարդկային գործոնի դերի և ազգային հոգեբանության առանձնահատկությունների հար-

<sup>24</sup> Պահակ. 1918, № 87:

<sup>25</sup> Հայկաշէն. 1918, № 3:

<sup>26</sup> Հայկաշէն. 1918, № 5-6:

ցերը: «Հայ քաղաքական իդեալիզմը» հոդվածում «Հայկաշէնի» «Պարթեւ» ծածկանունով հոդվածագիրը հայ ժողովրդի անցած ուղին քննելով գտնում էր, որ ստեղծված իրավիճակի համար պատասխանատու են նաև հայերը, որոնք չեն կարողացել երբևիցեւ ըմբռնել այն պարզ ճշմարտությունը, թե «աւազակին հետ դրացիութիւն ընողը կամ ինքն ալ աւազակ պետք է ըլլայ ոտքեն մինչև գլուխը զինուած ամէն րոպէ ինքնապաշտպանութեան պատրաստ, կամ պետք է միանգամ ընդմիշտ անվնաս դարձնէ զայննախ գործնականապէս ապացուցանելով իր ոյժը և ապա նստակեաց կեանքի վարժեցնելով զայն: Ոչ մեկն ըրած ենք, ոչ միւսը: Եւ հետևանքն այն եղած է որ մեկ կողմէ կառավարական սիսթեմաթիք ջարդերը, միա կողմէ քիւրտական շահատակութիւնները և երրորդ կողմէ զանազան «բարեկամներու» դիային ծրագիրները շարունակ քայլայած են մեր հայրենիքը»<sup>27</sup>: Ըստ հոդվածագրի, այսպիսի պայմաններում հայ ժողովրդին իր փրկությանը միշտ սպասել է դրսից, ու մինչև երբ է շարունակվելու հայ ժողովրդի այդ յուրատեսակ «իդեալիզմը», հոետորական հարց էր բարձրացնում հեղինակը<sup>28</sup>:

**Պահակի»** էջերում ազատականները կարևորում էին վերածնված դեմոկրատական Հայաստանում ազգային կրթության արմատավորումը: Նրանց պատկերացմամբ՝ Հայաստանում կրթության բովանդակությունը պիտի լինի

<sup>27</sup> Հայկաշէն. 1918, № 4:

<sup>28</sup> Հայկաշէն. 1918, № 4:

ազգային, իսկ դպրոցները՝ պետական (դա վերաբերվում էր միայն տարրական ու միջնակարգ դպրոցներին): Ազատականները զգուշանում էին մասնավոր դպրոցներից՝ գտնելով, որ դրանք անխոսափելիորեն ունենալու են «կրոնական և այլ մասնավոր նպատակներ», որոնք կարող են վտանգավոր լինել հայ ազգային ուժերի համախմբման տեսակետից<sup>29</sup>:

Ազատականները մտահոգված էին 1919 թ. ծավալվող թուրք ազգայնական շարժմամբ: Օրինակ, «Դեպքը Անստոլովի մէջ» հոդվածում ուղղակիորեն ասվում է, որ Մուստաֆա Քեմալի կազմակերպությունը, եթե անգամ իթթիհատի հետ կապ չունի, այնուամենայնիվ, համախլամական ձգտումներով լցված մոլեռանդների խմբավորում է, հիմնված «թուրք ժողովրդին կեավորին հանդէա ունեցած ատելութեան» վրա<sup>30</sup>: Այս համատեքստում է Կիլիկիայում տեղի ունեցող հայերի կոտորածների կապակցությամբ ամերիկահայերի ազգային միության նախագահ Միհրան Սվազյանի «Պահակում» իրապարակված դիմումն ԱՄՆ-ի կառավարությանը: Այստեղ շեշտվել է այն հանգամանքը, որ քանզի քեմալական շարժման ակտիվացումը կիլիկիահայության համար մեծ սպառնալիք է, ամերիկահայությունն ակնկալում է, որ ԱՄՆ-ի կառավարությունն Անտանտի իր դաշնակիցների հետ քայլեր կկատարի ստիպելու թուրքերին գործադրելու զինադա-

<sup>29</sup> Պահակ. 1919, № 30:

<sup>30</sup> Արագած. 1919, № 45:

դարի պայմանները, որն ի վերջո հանգում էր հայերի քաղաքական ու տնտեսական անվտանգութան ապահովմանը<sup>31</sup>:

Ազատականները հույսեր էին փայփայում, որ Փարիզի վեհաժողովում հաշվի կառնվեն հայ ժողովորդի մեծ զոհությունները և որ այն կառաջնորդվի «արդարութեան և մարդկայնութեան» գաղափարներով<sup>32</sup>: Դրա հետ մեկտեղ, պատմության օրինակներով (Բեղյինի վեհաժողով, Մայիսյան բարենորոգումների ծրագիր և այլն) ցոյց է տրված, որ օտար պետություններից ակնկալվող անվտանգության ապահովման հայ ժողովորդի հույսերը չեն արդարացել<sup>33</sup>:

Իրենց պարբերականներում ազատականներն արձարծել են ազգային ներքին կյանքում գոյություն ունեցող բացասական երևոյթների խնդիրը: «Արագածի» «Երբ պիտի խրատուինք» խմբագրական հոդվածում տեսակետ էր առաջ քաշվում, որ հայ ժողովորդը դեռևս ազգովին չի ճշտել իր քաղաքական նպատակը, և ինքնախաբեությամբ սպասում է, որ «ուրիշներ բերեն իր երազած բարիքները»: Խմբագրականը «Երկելի» էր որակում այն երևոյթը, երբ քաղաքական անհաջողությունների պատասխանատվությունը հայ ազգային ուժերը որոնում են դրսում՝ առանց տեսնելու սեփական պատասխանատ-

<sup>31</sup> Պահակ. 1919, № 31:

<sup>32</sup> Արագած. 1919, № 1:

<sup>33</sup> Արագած. 1920, № 50:

վուլթան բաժինը<sup>34</sup>:

«Պահակը» հիմարակուլթամբ էր խոսում 1919 թ. փետրվարին Փարիզում ընթացող հայկական համագումարի աշխատանքների մասին՝ գրելով. «Ուզում ենք լավատեսի աչքերով նայել իրադարձությունների զարգացմանը, բայց նկատում ենք, որ հայ ժողովրդի ամենամեծ ու տնաքանդ վերքը՝ անմիաբանությունը, չար նախանձը մեծ վնաս կարող է տալ մեր խնդրին»<sup>35</sup>: «Անխուսափելին» խմբագրական հոդվածում Վ. Շահրիմանն ուղղակիորեն գրում է, որ հարգանքի է արժանի միայն այն ժողովուրդը, որը կրվի է եթել պաշտպանելու իր պատիվն ու իրավունքները, հակառակ պարագայում, «ազգը ինքնապանութիւն գործած կըլլայ պարզապէս»<sup>36</sup>: Այս համատեքստում է <Պոնճությանի «Ապագա Թուրքիան և մենք» հոդվածը, որում հեղինակն իրավացիորեն գրել է, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հաջողությունը պայմանավորված է նրա ինքնապաշտպանության պատրաստվածությամբ, հայկական պետության ներքին ամրությամբ և հայ դիվանագետների հմտությամբ<sup>37</sup>:

Այս խնդրիները նկատի ունենալով էր «Արագածը» գրում, որ հայության համար ազգայնականությունը սոսկ քաղաքական ուսմունք չէ, այլ կենսական անխուսափելի

<sup>34</sup> Արագած. 1919, № 16:

<sup>35</sup> Պահակ. 1919, № 35:

<sup>36</sup> Արագած. 1919, № 38:

<sup>37</sup> Արագած. 1919, № 41:

անհրաժեշտություն, որը բխում է օբյեկտիվ իրականությունից<sup>38</sup>:

Պարբերականում կարմիր թելի պես անցնում է համահայկական խնդիրների շուրջ ազգային բոլոր ուժերի համագործակցության գաղափարը<sup>39</sup>:

Դեռևս 1919 թ. գարնանը ազատական մամուլում մտավախություն էր հայտնվում, որ բոլշևիզմի հաղթանակը բացասական ազդեցություն կունենա *Հայկական հարցի* լուծման վրա<sup>40</sup>: Բարձրացնելով սոցիալիզմի գաղափարախոսության նկատմամբ հայ ժողովրդի վերաբերմունքի հարցը, Վահան Շահրիմանը գրում էր, որ իրենց գոյության խնդրով մտահոգված փոքր ժողովուրդները «դառնորեն համոզուեցան, թե իրենց ազգային ճակատագրին դէմ ոճիր մը գործած պիտի ըլլան, եթե ընկերվարական վարդապետութիւններէ փրկութիւն ակնկալէն»՝ առանց նկատի ունենալու այն պայմանները, «ուժերը, ցեղերը, որոնցով շրջապատուած է իրենց հավաքական կեանքը»<sup>41</sup>:

Խոսելով Երկրորդ ինտերնացիոնալի քայլայման մասին, Բոստոնի «Պահակը» գրում էր. «Երան՛ի թէ Պեռնի խորհրդաժողովին մէջ Երևան եկած գաղափարի խայտարդետութիւնը գոնէ հայ ընկերավարականները համո-

<sup>38</sup> Արագած. 1919, № 35:

<sup>39</sup> Արագած. 1919, № 41, 42, 44, 49:

<sup>40</sup> Պահակ. 1919, № 20:

<sup>41</sup> Արագած. 1919, № 19, 21:

գէր, որ ինթեռնացիոնալին հավատք ընծայել կարելի չէ»<sup>42</sup>: Թերթը գտնում էր, որ «ընկերվարութեան վտանգին դէմ» հայ ժողովրդի միակ պատնեշն ազգայնականությունն է, որը կարող է պահպանել ազգը որպես հաստատուն և առողջ օրգանիզմ, հավաքական ուժ: Ըստ ազատականների՝ ազգայնականության հիմնասյուներն են հայրենիքի անկախության գաղափարը, հարգանքն ու հավատը ազգային պատմության, մշակույթի և ավանդույթների հանդեպ<sup>43</sup>:

Ուշագրավ է սակայն, որ բոլշևիկներին քննադատելով «Պահակը» համակրանքով էր խոսում Ստեփան Շահումյանի մասին և Բաքվում ծավալած նրա գործունեությունը քննութագրում որպես հայանպաստ<sup>44</sup>: Ազատականները տագնապով էին հետևում քեմալաբոլշևիկյան համագործակցության ծավալմանը, որը լուրջ սպառնալիք էին համարում Հայաստանի Հանրապետության համար: Բարձրացնելով Վրաստանի ու Ադրբեջանի հետ հարաբերությունների հարցը, «Պահակը» փաստում էր Վրաստանի երկդիմի քաղաքականությունը, Ադրբեջանի ազրեսիվ, նվաճողական ծգողությունը և հոռետեսորեն էր տրամադրված այդ պետությունների հետ Հայաստանի դաշինքին<sup>45</sup>: Թերթն ահազանգում էր կիլիկիահայության

<sup>42</sup> Պահակ. 1919, № 26:

<sup>43</sup> Պահակ. 1919, № 31:

<sup>44</sup> Պահակ. 1919, № 34:

<sup>45</sup> Պահակ. 1920, № 46:

ծանր դրության մասին: Ֆրանսիային որդեգրած հակա-հայկական քաղաքականության բացահայտ դրսևորումից հետո «Պահակը» դատապարտեց «ասպետական ու քա-ղաքակիրթ» Ֆրանսիայի թուրքամետությունը<sup>46</sup>:

1920 թ. հունիսին ԱՄՆ-ի սենատի կողմից Հայաստա-նի մանդատի մերժումը մեծ ազդեցություն գործեց ազա-տականների մտայնության և հետագա գործելակերպի վրա: Նկատելի էր դառնում աստիճանական շրջադարձը դեպի խորհրդային Ռուսաստանի հետ համագործակ-ցությունը: Թեպետ «Պահակը» դատապարտեց Հայաս-տանի բոլշևիկների մայիսյան ապստամբությունը, բայց դրա հետ մեկտեղ ՀՀ կառավարությանը կոչ էր անում ջանքերն ուղղելու բոլշևիկյան Ռուսաստանի հետ հարա-բերությունների կարգավորմանը<sup>47</sup>: Վերլուծելով ստեղծ-ված իրադրությունը, «Պահակը» Ռուսաստանի Այսրկով-կաս ներխուժելու դեպքում հավանական չէր համարում հայ-ռուսական ռազմական առճակատումը, գտնելով, որ Հայաստանը պիտի դառնա «պաշտօնապէս պօլշէվիք»<sup>48</sup>: Հայաստանի խորհրդայնացումից հետո բոլշևիզմի հետ ունեցած գաղափարական տարածայությունները թեև չվերացան, սակայն ազատականների համար առաջնա-յին դարձավ ազգային պետության գործոնը, այն իրո-դրությունը, որ իր պատմական հայրենիքի մի մասում հայ

<sup>46</sup> Պահակ. 1920, № 54:

<sup>47</sup> Պահակ. 1920, № 46, 56:

<sup>48</sup> Պահակ. 1920, № 46, 56:

ժողովորդը վերակերտեց իր պետականությունը: Ազատականները դատապարտեցին 1920 թ. կետրվարյան ապստամբությունը և դաշնակցությունից պահանջեցին դադարեցնել հակախորհրդային գործունեությունը<sup>49</sup>: Խորհրդային Հայաստանի ներքաղաքական ու տնտեսական կյանքը լայնորեն լուսաբանվում էր ազատական մամուլի էջերում: «Պահակը» գովեստով էր խոսում Ալ. Մյասնիկյանի մասին, որը ձգտում էր, պարբերականի բնորոշմամբ, հայ ժողովորդին փրկել սովից և վերաշինել խորհրդային Հայաստանը<sup>50</sup>: Այդ թերթի «Հայաստանի սովետակաները» խմբագրականում ասվում էր, որ Հայաստանը սովի ճիրաններից փրկելը պիտի դառնա գաղութահայության կարգախոսը<sup>51</sup>:

## Եզրակացություններ

1911-1921 թթ. լուս տեսած հայ ազգայնական-ազատական մամուլի օրգանները («Արագած», «Հայկաշէն», «Պահակ») լուսաբանել են հայ ազգային-մշակութային կյանքը, արձարձել են հայ ժողովորդին հուզող բազմաթիվ հարցեր:

1918 թ. հետո հիշյալ պարբերականների հրապարակումներում առանցքային տեղ է գրավում հայոց պետականության հիմնախնդիրը: Այս թեմայով հրապարակում-

<sup>49</sup> Պահակ. 1921, № 84, 89:

<sup>50</sup> Պահակ. 1921, № 77:

<sup>51</sup> Պահակ. 1921, № 90:

Ները շատացան Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտությունից հետո, երբ Փարիզի վեհաժողովում բարձրացվեց հայկական ազգային պետության ստեղծման հարցը: «Արագածի», «Պահակի», «Հայկաշէնի» էջերում քննարկվում էին ապագա հայկական պետության կառավարման համակարգի, քաղաքական ու տնտեսական կառուցվածքի, հայոց պետությանը սպառնացող վտանգների հարցերը: Ուշագրավ է, որ հատկապես հիշյալ սպառնալիքների թվում (քեմալական շարժում, Ադրբեյջանի կողմից տարածքային հավակնություններ, Հայաստանի բոլշևիկացում և այլն) ազատականները բարձրացնում էին նաև ներքին սպառնալիքների խնդիրները: Դրանցից էին հայ քաղաքական ուժերի անմիաբան գործունեությունը, ազգային կենսական խնդիրների նկատմամբ հայության զգայի մասի չեզոք դիրքորոշումը և ազգային անվտանգության հարցի լուծումը հայժմուկության դողով:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արագած, Նյու Յորք, 1911, № 1-6, 8, 11-14, 16, 20:

Արագած, Կ. Պոլիս, 1919, № 1, 16, 19-21, 35, 38, 41-44, 49:

Արագած, Կ. Պոլիս, 1920 № 1, 50, 51:

Հայկաշէն, Թիֆլիս, 1917, № 1-6:

Հայկաշէն, Թիֆլիս, 1918, № 4:

Պահակ, Բոստոն, 1917, № 67, 70, 72:

Պահակ, Բոստոն, 1918, № 87, 103:

Պահակ, Բոստոն, 1919, № 26, 30, 31, 34, 35, 46, 38, 39:

Պահակ, Բուլղոն, 1920, № 46, 54, 56:

Պահակ, Բուլղոն, 1921, № 77, 90:

**Гегам А. Ованнисян, Институт истории НАН РА, к.и.н., доцент, Национальные проблемы в прессе Реорганизованной партии «Гнчак» (1911-1921)**

### **Резюме**

Издававшиеся в 1911-1921 гг. органы армянской либеральной прессы («Арагац», «Айкашен», «Пахак») освещали армянскую национально-культурную жизнь и поднимали многочисленные вопросы, волновавшие армянский народ.

После 1918 года в публикациях упомянутых периодических изданий центральное место занимает проблема армянской государственности. Публикации на эту тему участились после поражения Османской Турции в Первой мировой войне, когда на Парижской конференции был поднят вопрос о создании Армянского национального государства. На страницах изданий «Арагац», «Пахак», «Айкашен» обсуждались вопросы будущей системы управления армянским государством, политической и экономической структуры, а также угроз армянской государственности. Примечательно, что среди упомянутых угроз (кемалистское движение, территориальные претензии Азербайджана, большевизация Армении) либералы (Реорганизованные гнчакисты) также поднимали проблему внутренних угроз.

К этим угрозам можно отнести отсутствие согласия в действиях армянских политических сил, нейтральную позицию значительной части армянства в отношении жизненно важных национальных проблем, а также попытки решения проблемы национальной безопасности вне армянского народа. Эти подходы Реорганизованных гнчакистов остаются актуальными и в наши дни, а упомянутые проблемы продолжают оставаться в числе

приоритетов внутренней и внешней политики Армении.

Исследование упомянутых периодических изданий освещает многие события того периода и в значительной степени способствует всестороннему и объективному изучению ряда вопросов армянской истории. Армянская либеральная пресса начала 20-го века оставила важный след в развитии армянской политико-публицистической мысли.

**Ключевые слова:** Реорганизованные гнчакисты, «Арагац», «Пахак», «Айкашен», национальная идеология, Республика Армения, Турция, Россия.

**Gegham H. Hovhannisyan, Institute of History of the NAS RA,  
Ph.D in History, Associate Professor, National Issues in the Press of the  
Reorganised Hunchak Party (1911-1921)**

## Summary

The organs of the Armenian liberal press published between 1911 and 1921 (“Aragats,” “Haykashen,” “Pahak”) extensively covered Armenian national and cultural life, addressing numerous issues that concerned the Armenian people.

After 1918, the issue of Armenian statehood took on a central role in these periodicals. Publications on this topic increased after the defeat of Ottoman Turkey in the First World War, when the creation of an Armenian national state was raised at the Paris Peace Congress. In the pages of “Aragats,” “Pahak,” and “Haykashen,” discussions revolved around the system of governance of the future Armenian state Armenian state, its political and economic framework, and the various threats to Armenian statehood. In addition to external threats (the Kemalist movement, Azerbaijan’s territorial ambitions, and the Bolshevization of Armenia), the liberals (i.e., the Reorganized Hunchakians) also

emphasized internal dangers. These included the disunited activities of Armenian political factions, the indifference of a significant part of the population to crucial national issues, and the tendency to seek solutions to security concerns from external sources rather than within the Armenian community. The relevance of these concerns, raised by the Reorganized Hunchakyans, persists today, as they continue to figure prominently in Armenia's domestic and foreign policy priorities.

The analysis of these periodicals provides valuable insights into the events of the time and significantly enhances a thorough and unbiased understanding of many aspects of Armenian history. In the early 20<sup>th</sup> century, the liberal Armenian press left a lasting impact on the development of Armenian political and journalistic thought.

**Key words:** Reorganized Hunchakyans, “Aragats,” “Pahak,” “Haykashen,” national ideology, Republic of Armenia, Turkey, Russia.

**ԳՈՒՐԳԵՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ԳԱԱ պատմության ինսդիվուլտ, պ.գ.թ., դոցենտ**

**gugvard57@gmail.com**

**ID 0009-0002-9858-5926**

**DOI:10.59523/1829-4596.2024.2(29)-93**

**XX Դ. ԱՌԱՋԻՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ  
ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ 1950-  
ԱԿԱՆ ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՄԵԶ\***

**Բանալի բառեր՝** Հայաստան, ազգային, խորհրդահայ դպրոց, հանրակրթություն, պատմագիտություն, մանկավարժություն:

**Ներածություն**

Ներկայումս մեր հանրապետության հանրակրթության բնագավառում կատարվող բարեփոխումները նպատակ են հետապնդում ստեղծել ժամանակի պահանջներին համապատասխանող հանրակրթական համակարգ: Դրանով պայմանավորված՝ հասարակական հետաքրքրություն է դրսևորվում նախորդ ժամանակաշրջանների հայ դպրոցի պատմության նկատմամբ:

Արդեն 1950-ական թթ. սկզբներին մեր հանրապե-

---

\* Ներկայացվել է 18.XI.2024 թ., գրախոսվել է 22.XI.2024 թ., ընդունվել է դպագրության 15.XII.2024 թ.:

տությունում կային գիտական և մանկավարժական մի շարք հաստատություններ, որոնք ուսումնասիրում էին նախախորհրդային հայ դպրոցի պատմությունը: Խորհրդահայ պատմագիտության կողմից այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարվել: Հայ դպրոցի և մանկավարժության պատմության տարբեր ժամանակաշրջանների մասին գրվել են մի շարք աշխատություններ:

Հիշատակման արժանի են մանկավարժ-գիտնականներ Ա. Շավարշյանի, Մ. Սանթրոսյանի, Ա. Մովսիսյանի և պատմաբան Ա. Աբրահամյանի աշխատությունները<sup>1</sup>:

Ներկայումս անհրաժեշտ է պատմաքննական վերլուծության ենթարկել և հանրագումարի բերել խորհրդահայ պատմաբանների և մանկավարժ-գիտնականների աշխատությունները, քանի որ դրանք գրվել են կոմունիստական գաղափարաքաղաքական դիրքերից և միակողմանի լուսաբանել հայ դպրոցի անցած պատմական ուղին: Կոմունիստական գաղափարախոսությունը պահանջում էր մարքս-լենինյան մեթոդոլոգիայի հիման վրա ուսումնասիրել նախախորհրդային հայ դպրոցի պատմությունը: Այն պետք է ներկայացվեր որպես հետադիմական և ոչ ժողովրդավարական կրթական հաստատություն, որը ծառայել է միայն շահագործող դասակարգերին:

---

<sup>1</sup> **Շավարշյան.** 1958: **Սանթրոսյան.** 1953: **Մովսիսյան.** 1958: **Աբրահամյան.** 1959:

Քանի որ մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ ներկայացնել այն բոլոր ուսումնասիրությունները, որոնք խորհրդահայ պատմագիտության կողմից կատարվել են նախախորհրդային արևելահայ դպրոցի պատմության ուսումնասիրության գործում, կանդրադառնանք միայն 1950-ական թթ. հրատարակված այն աշխատություններին, որոնք լուսաբանում են XX դ. առաջին քսանամյակի արևելահայ դպրոցի պատմությանը:

### **Արևելահայ դպրոցի 1900-1918 թթ. պատմությունը 1950-ական թթ. խորհրդահայ պատմագիտության մեջ**

Հայ դպրոցի պատմության մեջ արևելահայ դպրոցի XX դ. առաջին քսանամյակի պատմությունն առանձնահատուկ տեղ է գրավում:

1955 թ. հրատարկվում է Ս. Մովսիսյանի «Ժողովրդական կրթության վիճակը և մարքսիստական գաղափարների տարածումը Հայաստանում (1900-1917)» աշխատությունը<sup>2</sup>: Այդ ուսումնասիրությունն առաջին փորձն էր՝ գիտականորեն ներկայացնելու նախորդ դարի սկզբներին Արևելյան Հայաստանի և Այսրկովկասի հայ դպրոցական համակարգի պատմությունը: Աշխատության աղբյուրագիտական բազան բավականին հարուստ է վիճակագրական տվյալներով, փաստաթղթերով և տվյալ ժամանակաշրջանին վերաբերող մամուլի

---

<sup>2</sup> Մովսիսյան. 1955, 10:

հոդվածների վերլուծությամբ: Հեղինակը հատկապես անդրադարձել է հայ մարքսիստական մամուլում տպագրված Ս. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Ղարիբջանյանի կրթության հարցերի վերաբերյալ հոդվածներին: Առանձնահատուկ ուշադրության են արժանի ուսումնասիրության առաջին երկու գլուխները, որտեղ հեղինակը վերլուծում է այդ ժամանակաշրջանի արևելյահայ դպրոցական համակարգը: Նա մանրամասնորեն ներկայացնում է Հայ առաքելական եկեղեցու հովանու ներքո գործող տարրական ու թեմական դպրոցների թվաքանակը, կանոնադրությունները և ուսումնադաստիրակչական գործունեությունը: Ս. Մովսեսյանն անդրադարձ է կատարել նաև պետական ու մասնավոր կրթական հաստատությունների ձևավորմանն ու զարգացմանը: Հեղինակի բնորոշմամբ, հայ դպրոցը տվյալ ժամանակահատվածում ոռուական առաջին ժողովրդավարական հեղափոխությունից հետո, առաջընթաց էր ապրում, սակայն առաջին աշխարհամարտի հետևանքով այն կասեցվեց:

Ս. Մովսեսյանի աշխատության դրական կողմերից է այն, որ նա ներկայացրել է հայ մտավորականության պայքարը Ռուսական կայսրության պայմաններում նոր դպրոցի ստեղծան համար: Նա ուշադրություն է հատկացրել նաև XIX դ. վերջին – XX դ. սկզբին կրթական հաստատություններում մարքսիստական գաղափարների տարածմանը: Չնայած այս աշխատությունը կրում է

«անհատի պաշտանմունքի» տարիների ազդեցությունը, դրական դեր խաղաց հետագա խորհրդահայ ուսումնա-սիրողների համար՝ պատկերացնելու այդ ժամանակաշրջանում արևելահայ դպրոցի անցած պատմական ուղին:

Նոյն թվականին հրատարակվում է «Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության» կոլեկտիվ աշխատությունը<sup>3</sup>: Նրա առաջին ակնարկի հեղինակ Ա. Մովսիսյանը համառոտ անդրադարձել է նաև արևելահայ դպրոցին՝ ներկայացնելով նրա վիճակը Ռուական կայսրության տիրապետության և Հայաստանի առաջին հանրապետության օրոք: Հեղինակը նախախորհրդային հայ դպրոցը բնորոշել է որպես հետադիմական: Ըստ նրա, «հայ բուժության և ռեակցիոն կղերականությունը դպրոցի միջոցով աճող սերնդին դաստիարակում էին հպատակության, ստրկամտության ոգով, նրա մեջ պատվաստում էին նացիոնալիզմ»<sup>4</sup>: Առավել մոայլ է նկարագրված այդ ժամանակաշրջանի հայ ուսուցիչների վիճակը: Ա. Մովսիսյանը գրում է, որ «հնամաշ շորերով, ծակծկված կոշիկներով, գունատ դեմքով ու նիհար մարմնով, անօթևան ու թափառական, կարիքի ու ծանր

<sup>3</sup> Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության. 1955, 8:

<sup>4</sup> Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության. 1955, 8:

հոգսերի տակ ճգմված է Եղել նախախորհրդային ժողովրդական ուսուցիչը»<sup>5</sup>: Փաստերը բերելիս նա հիմնականում հենվում է Վ. Լենինի, Ի. Ստալինի երկերից բերված որոշ թեզերի, Ալ. Մյասնիկյանի, Ա. Միկոյանի և ուրիշների հոդվածների ու գեկուցումների, ինչպես նաև Մ. Նալբանդյանի, Ռաֆֆու, Հովհ. Թումանյանի գրական ստեղծագործությունների վրա: Սակայն Ա. Մովսիսյանի բերած փաստերը միակողմանի էին և չէին արտացոլում հայ դպրոցի ամբողջական պատկերը նախախորհրդային ժամանակահատվածում: Ընդ որում, նա կոմունիստական գաղափարախոսական դիրքերից ելնելով, նախախորհրդային ժամանակաշրջանի հայ դպրոցն ամեն կերպ հակադրում է խորհրդային դպրոցին:

Հեղինակը գտնում է, որ նախախորհրդային ժամանակաշրջանում «ուսուցման խայտաբղետ սիստեմը՝ մասնավոր, եկեղեցական, պետական և այլ տիպի դպրոցների գոյության պայմաններում, ղեկավարման միասնական կենտրոնի, միասնական ուսումնական ծրագրի բացակայությունը, դպրոցներում գոյություն ունեցող կամայականությունը և այլն, հասցնում էին այն բանին, որ մթագնվում էր երեխաների գիտակցությունը»<sup>6</sup>: Հենվելով Հովհ. Թումանյանի կենսագրությունից և

<sup>5</sup> Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության. 1955, 13:

<sup>6</sup> Աբրահամյան. 1959, 7:

խորհրդահայ նշանավոր մանկավարժ Սիմակ Սահակյանի հուշերից քաղված որոշ փաստերի վրա, Ա. Աբրահամյանը նախախորհրդային դպրոցները բնորոշում է որպես «տերթողիկյան» և «բարբարոսական մեթոդներով» կառավարվող<sup>7</sup>: Սակայն, իրականում, դեռևս XIX դ. երկրորդ կեսից Հայ առաքելական եկեղեցու հովանու ներքո գործող կրթական հաստատություններում արգելվել էին մարմնական պատիժները, իսկ դրանք խախտողները ենթարկվում էին պատասխանատվության՝ ընդհուարկ գրկվելով մանկավարժական լիցենզիայից<sup>8</sup>:

Անդրադառնալով Ռուսական կայսրությունում հայ դպրոցի վիճակին՝ հեղինակը եզրակացնում է. «Ճիշտ է նաև այն փաստը, որ նախքան հեղափոխությունը Հայաստանում ժողովրդական կրթությունը գտնվում էր որոշ չափով ավելի բարձր մակարդակի վրա, քան Ռուսաստանի շատ ուրիշ շրջաններում»<sup>9</sup>: Ա. Աբրահամյանը, որպեսզի ցույց տա հայ դպրոցի զարգացվածության աստիճանը, առանց իիմսավորման՝ այն համեմատության մեջ է դնում միջինասիհական ժողովուրդների դպրոցների հետ: Սակայն դա ճիշտ չէ, քանի որ հայ դպրոցը գտնվել է այլ տարածաշրջանում և ունեցել է զարգացման իր ուրույն ուժին: Ա. Աբրահամյանի ուսումնասիրության մեջ բերված վիճակագրական թվերը ցույց են տալիս, որ

<sup>7</sup> Աբրահամյան. 1959, 5:

<sup>8</sup> Երկանյան. 1970, 202:

<sup>9</sup> Աբրահամյան. 1959, 7:

1914/15 թթ. ուս. տարվա սկզբին Ռուսական կայսրության տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում գործել է 459 դպրոց՝ 43738 աշակերտով<sup>10</sup>: Դրանից ելնելով, նա ճիշտ եզրակացնում է, որ դա բավարար համարել չէր կարելի, քանի որ «Հայաստանի յուրաքանչյուր 1000 բնակչին ընկնում էր ընդամենը 35 սովորող»<sup>11</sup>: Ա. Աբրահամյանի աշխատության նորություններից մեկն էլ այն էր, որ օգտագործելով պատմահամեմատական մեթոդը, նա ներկայացնում էր Ռուսական կայսրության ժողովրդական կրթությանը հատկացվող պետական ֆինանսական միջոցները: Հղում անելով Վ. Լենինին, նա գտնում է, որ ցարական իշխանության կողմից ժողովրդական կրթությանը հատկացվող ֆինանսավորումը բավականին չնշին էր՝ Ռուսաստանում՝ 80 կոպեկ, իսկ Հայաստանում ընդամենը 39 կոպեկ, որը չէր կարող համեմատության մեջ դրվել արևմտաեվրոպական երկրների և ԱՄՆ-ի հետ, «քանի որ այդ նույն ժամանակ Բելգիայում, Անգլիայում, Գերմանիայում յուրաքանչյուր բնակչի կրթության վրա ծախսվել էր 2 – 3 ռուբլի, իսկ Ամերիկայում 9 ռ. 24 կ.»<sup>12</sup>: Իրականում Հայաստանում եկեղեցու հովանու ներքո գործող ծխական և թեմական դպրոցների ֆինանսավորումն ու պահպանումը դարեդար իմաստականում իրականացվել էր ժո-

<sup>10</sup> Աբրահամյան. 1959, 6:

<sup>11</sup> Աբրահամյան. 1959, 7:

<sup>12</sup> Աբրահամյան. 10:

ղովրդի հանգանակած միջոցների շնորհիվ: Տարրական և թեմական դպրոցները հանդիսացել են հայ ժողովրդի կրթական զարգացման հիմքը, իսկ դրանց վերաբերյալ բացասական դիրքորոշումը ձևավորվել էր կոմունիստական գաղափարախոսության վերաբերմունքից եկեղեցու հանդեպ:

### **Դպրոցական համակարգը Հայաստանի առաջին հանրապետությունում**

Խորհրդահայ պատմագիտությունը սուր քննադատության էր Ենթարկում Հայաստանի առաջին հանրապետության դպրոցական համակարգը:

Ա. Մովսիսյանը գտնում էր, որ «դաշնակների տիրապետության» ժամանակաշրջանում դպրոցը քայլայվել և օրիհասական վիճակում էր՝ «գրեթե դադարել էր գործելուց առանց այդ էլ խոճուկ դպրոցական ցանցը»<sup>13</sup>: Իր այս միտքը հիմնավորելու համար նա բերում է թվական տվյալներ, ըստ որոնց, իբրև թե, 1918-1920 թթ. ընթացքում Հայաստանի առաջին հանրապետությունում գործել է ընդամենը 166 դպրոց՝ 18600 աշակերտով<sup>14</sup>: Սակայն այս թվական տվյալները վերաբերում են միայն 1918 թ. կեսերին, երբ Առաջին աշխարհամարտի և

<sup>13</sup> Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության. 1955, 9:

<sup>14</sup> Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության. 1955, 9:

թուրքական արշավանքի հետևանքով երկրի դպրոցական կյանքը կաթվածահար էր եղել: Նկատենք, որ խորհրդահայ պատմաբանների և մանկավարժ-գիտնականների մեծ մասն այս թվական տվյալներն են ընդունել որպես հիմք:

Ա. Աբրահամյանի մենագրության մեջ Հայաստանի առաջին հանրապետության դպրոցների վիճակը բավականին համառոտ է ներկայացված: Առանց արխիվային փաստաթղթերն ուսումնասիրելու, նա գտնում էր, որ Առաջին հանրապետության շրջանում ժողովրդական տնտեսության քայլայման, սովոր և համաճարակային հիվանդությունների պայմաններում դպրոցների թիվը կրճատվել էր երկուաուկես անգամ<sup>15</sup>:

Հայաստանի առաջին հանրապետությունում զգալի աշխատանք կատարվեց նոր՝ ազգային-պետական կրթական համակարգի ստեղծման ուղղությամբ: 1918 թ. սեպտեմբերից հանրապետության կրթական բնագավառում իրականացվեցին ժողովրդավարական բարեփոխումներ:

## **Եզրակացություններ**

Խորհրդային Հայաստանում 1950-ական թթ. իրատարակվեցին հիմնականում նկարագրական բնույթի մի քանի աշխատություններ, որոնք լուսաբանում էին նախախորհրդային արևելահայ դպրոցի պատմությունը:

<sup>15</sup> Աբրահամյան. 1959, 12-13:

Առաջնորդվելով կոմոնիստական գաղափարախոսությամբ, հենվելով հայ դասական գրողների և մանկավարժների հուշերի, պետական-կուսակցական գործիչների հոդվածների և զեկուցումների վրա՝ դրանցում արևելահայ դպրոցի պատմությունը ներկայացվում էր միակողմանիորեն: Արևելահայ դպրոցը համարվում էր հետադիմական, որը չէր նպաստել ժողովրդի կրթական մակարդակի բարձրացմանը: Այդ հեղինակները ուշադրություն չէին հատկացնում հայ եկեղեցու հովանու տակ գործող դպրոցական համակարգին, որն ազգապահպան կարևոր գործոն էր: Չնայած դրան, 1950-ական թթ. հրատարակված այս աշխատություններն առաջինն էին, որ փորձում էին ի մի բերել արևելահայ դպրոցի 1900-1920 թթ. անցած ուղին և հետագա ուսումնասիրությունների հիմք էին:

Նախախորհրդային հայ դպրոցի պատմության ուսումնասիրությունը հայ գիտնական-մանկավարժների և մշակութաբան-պատմաբանների կողմից շարունակվեց 1960-1980-ական թթ., երբ ստեղծվեցին աշխատություններ, որոնք կարևոր դեր խաղացին հայ մանկավարժություն պատմության զարգացման մեջ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Աբրահամյան Ա.** 1959, ժողովրդական կրթության նվաճումները Սովետական Հայաստանում, Երևան, Հայպետհրատ, 172 էջ:

Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության. 1955, Երևան, ԵՊՀ, 233 էջ:

**Երկանյան Վ.** 1970, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905 թթ.), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 309 էջ:

**Մովսիսյան Ա.** 1958, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, Հայպետուամանկիրատ, 526 էջ:

**Մովսիսյան Ա.** 1955, Ժողովրդական կրթության վիճակը և մարքսիստական գաղափարների տարածումը Հայաստանում, Երևան, «Հայպետուամանկիրատ», 190 էջ:

**Շավարշյան Ա.** 1958, Հայ մանկավարժներ (XIX դար), հ. 1, Երևան, «Հայպետուամանկիրատ», 622 էջ:

**Սանթրոսյան Մ.** 1953, Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյան, Հայպետիրատ, Երևան, 310 էջ:

**Гурген В. Варданян,** Институт истории НАН РА, к.и.н.,  
доцент, История восточноармянской школы первых  
двадцатилет XX в. в советско-армянской историографии  
1950-х гг.

## Резюме

Труды армянских педагогов-ученых и историков советского периода занимают важное место в истории армянской педагогики. В 1950-х гг. были опубликованы работы, посвященные истории восточно-армянской школы. Опираясь на марксистско-ленинскую методологию, принятую в советской педагогике, и исходя из задач коммунистической идеологии, эти работы односторонне освещали историю восточноармянской

школы первого двадцатилетия XX века. Её представляли как отсталую и не способствующую повышению образовательного уровня народа, с целью подчеркнуть, что процветание армянской школьной системы стало возможным исключительно благодаря созданию советской образовательной модели.

**Ключевые слова:** Армения, национальность, советско-армянская школа, общее образование, историография, педагогика.

**Gurgen V. Vardanyan, Institute of History of the NAS RA, Ph.D in History, Associate Professor, Coverage of the History of the Eastern Armenian School of the First Twenty Years of the 20<sup>th</sup> Century in the Soviet-Armenian Historiography of the 1950s**

### Summary

The works of Armenian pedagogues-scientists and historians of the Soviet period occupy an important place in the history of Armenian pedagogy. The works dedicated to the history of the Eastern Armenian school were published in the 1950s. Guided by the Marxist-Leninist methodology adopted by Soviet pedagogy and the problems of communist ideology, these works unilaterally covered the history of the Eastern Armenian School in the first twenty years of the 20th century presenting it as retrograde step that did not contribute to the improvement of the educational level of the people. Their purpose was to show that the Armenian school system prospered only thanks to the establishment of the Soviet system.

**Key words:** Armenia, national, Soviet-Armenian school, general education, historiography, pedagogy.

**MANUSHAK V. MARKOSYAN**

*Universität Hamburg, Dissertationskandidat*

m.markosyan13@gmail.com

ID 0009-0005-1018-4813

DOI:10.59523/1829-4596.2024.2(29)-106

**ARMIN T. WEGNER: DIE AUSTREIBUNG DES  
ARMENISCHEN VOLKES IN DIE WÜSTE (VORTRAG  
MIT LICHTBILDERN IN DER “URANIA”, BERLIN,  
MÄRZ 1919)\***

**Schlüsselwörter:** Armin Wegner, Martin Tamcke, die Austreibung, das Deutsche Reich, das Osmanische Reich, Deutsche Gesellschaft, “Urania-Vortrag”.

**Editorische Vorbemerkung**

Der “Urania-Vortrag” Armin T. Wegners ist - zusammen mit den in seinem Verlauf gezeigten Lichtbildern - im Deutschen Literaturarchiv Marbach als Manuskript im Original erhalten. Er wurde erstmals 2001 von Prof. Martin Tamcke veröffentlicht, der an der Universität Göttingen Ökumenische Theologie mit Schwerpunkt auf orientalischer Kirchen- und Missionsgeschichte lehrt<sup>1</sup>.

Armin T. Wegner hat seinen Lichtbilder-Vortrag unter demselben Titel noch zweimal gehalten, nämlich am 22. April 1919 in Breslau und Ende Juni 1924 in Wien, aber jeweils Änderungen am Text vorgenommen und manche Lichtbilder

---

\*Submitted on 03.XII.2024, reviewed on 06.XII.2024, accepted for publication on 15.XII.2024.

<sup>1</sup> Tamcke. 2001, 65-135.

nicht mehr gezeigt. Die Fassung des in Wien gehaltenen Vortrages hat der an der Bergischen Universität Wuppertal lehrende Professor der Germanistik, Andreas Meier, in einer kritischen, mit großer Akribie erarbeiteten und mit einem Nachwort versehenen wissenschaftlichen Edition veröffentlicht, die auch die Unterschiede zu der Berliner Fassung des Vortrages dokumentiert<sup>2</sup>.

### **Historische Bedeutung des Berliner “Urania-Vortrages” von Armin T. Wegner**

Welche Bedeutung hat der Berliner “Urania-Vortrag” Armin T. Wegners für den armenischen Leser noch heute, über 100 Jahre später. Auf diese Frage ist folgende Antwort zu geben: Wegner war Augenzeuge des im Osmanischen Reich am armenischen Volk begangenen "Genozids" und ist mit seinem Wissen über die schrecklichen Ereignisse und Verbrechen sehr früh, mit starkem Engagement und gegen heftige Widerstände an die Öffentlichkeit gegangen. Tief erschüttert von dem, was er 1915/16 in Ost-Anatolien gesehen, gehört und erlebt hatte, war Wegner damals – noch vor Lepsius - der Erste in Deutschland, der den Mut besaß, das an dem armenischen Volk begangene ungeheuerliche Verbrechen öffentlich in der Hauptstadt des Deutschen Reiches darzustellen und das nationale Gewissen aufzurütteln<sup>3</sup>. Befreit von der politischen Zensur des zusammengebrochenen deutschen Kaiserreiches, war der “Urania-Vortrag” einer der ersten Schritte, die Wegner unternahm, um in Deutschland unmittelbar nach dem zu Ende

---

<sup>2</sup> Meier. 2011, 93-152.

<sup>3</sup> Siehe Wegners Biographie, die ihn zu diesem Schritt befähigte: Nickisch. 1982.

gegangenen verlorenen Weltkrieg, nach der erfolgreichen November-Revolution, nach der Ausrufung der Republik und unter den 1919 in Berlin herrschenden, völlig veränderten politischen Verhältnissen die deutsche Öffentlichkeit über die planmäßige Vernichtung des armenischen Volkes im Osmanischen Reich aufzuklären.

### **a. Der “Urania-Vortrag” – erste Aufklärung der deutschen Öffentlichkeit über den Völkermord an den Armeniern**

Die Aufklärung über den “Genozid” war gerade in Deutschland besonders wichtig, weil das Deutsche Reich der wichtigste Verbündete des Osmanischen Reiches im Ersten Weltkrieg war<sup>4</sup>. Mehr als das: die “deutsch-türkische Waffenbruderschaft” war sehr populär<sup>5</sup>. Deutsche Offiziere haben wesentliche, manchmal entscheidende Rollen auf dem türkischen Kriegsschauplatz im Nahen und Mittleren Osten gespielt<sup>6</sup>. An mehreren Fronten hatten sie hohe Kommandopositionen inne<sup>7</sup>. Viele der in der Türkei Dienst leistenden deutschen Soldaten waren in Aktivitäten verstrickt, die die Vernichtung des armenischen Volkes bezweckten<sup>8</sup>. Sie wurden Zeugen der türkischen Verbrechen. In Deutschland war davon nur wenigen Menschen etwas bekannt. Zu ihnen gehört an vorderster Stelle Johannes Lepsius. Er versuchte trotz der Militärzensur schon während des Krieges, die deutsche

---

<sup>4</sup> **Kampen.** 2016.

<sup>5</sup> Siehe statt vieler Autoren nur: **Jäckh.** 1915.

<sup>6</sup> **Bloxham.** 2002, 213-245.

<sup>7</sup> Die bedeutendste Persönlichkeit war zweifellos Generalfeldmarschall Colmar Freiherr von der Goltz Pascha.

<sup>8</sup> **Gottschlich.** 2015, **Dadrian.** 1996.

Öffentlichkeit über die schrecklichen Ereignisse in der Türkei und über das Verbrechen am armenischen Volk zu informieren. Lepsius Stimme war aber zu schwach. Sie kam gegen das ganz unkritische, positive Bild nicht an, das das deutsche Volk im Krieg vom “türkischen Waffenbruder” hatte.

### **b. Wegners Vortrag und Lepsius` Dokumentation von 1919**

Als Armin T. Wegner im März 1919 seinen Vortrag in der “Urania” hielt, stand Johannes Lepsius nur wenige Monate vor der Veröffentlichung seiner auch in der Republik Armenien bekannten Dokumentensammlung “Deutschland und Armenien. 1914-1918”<sup>9</sup>. Sie sollte im “Tempel Verlag”, Potsdam, erscheinen. Das Vorwort zu diesem bedeutenden Werk hatte Lepsius “Ostern 1919”, also bald nach Wegners Vortrag, geschrieben. Die Auslieferung des Buches an die Buchhandlungen folgte im Herbst jenes Jahres. Nun erst konnte diese umfassende Dokumentation der Vernichtung des armenischen Volkes in der deutschen Öffentlichkeit Wirkung entfalten. Wegners Vortrag in der “Urania” war infolgedessen das erste Ereignis in Deutschland, bei dem das Verbrechen am armenischen Volk so deutlich beim Namen genannt und verurteilt wurde. Auch darin zeigt sich der geschichtliche Rang des hier dokumentierten “Urania-Vortrages” von Armin T. Wegner. Dieser Einschätzung steht nicht die Tatsache entgegen, dass Lepsius schon 1916 im Tempel-Verlag eine Schrift zur Unterrichtung der deutschen Öffentlichkeit unter dem Titel “Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei”

---

<sup>9</sup> Lepsius. 1919.

veröffentlicht hatte<sup>10</sup>. Denn die öffentliche Wirkung dieser Broschüre war wegen der freiheitsfeindlichen innenpolitischen Verhältnisse und der Zensur während des Krieges und ferner wegen ihrer kleinen Auflage nur sehr gering<sup>11</sup>.

In den herrschenden politischen Kreisen und politischen Parteien des Deutschen Reiches waren Sympathien für das Osmanische Reich und die Türken damals sehr stark und weit verbreitet. Es gab prominente Politiker und Publizisten, die imperiale, kolonialistische Ambitionen in Bezug auf das Osmanische Reich unterstützten und sich aus diesem Blickwinkel mit der “armenischen Frage” beschäftigten. Davon war auch ihre Einstellung gegenüber den Armeniern in der Türkei beeinflusst. Herausragende Persönlichkeiten waren insofern Paul Rohrbach, Friedrich Naumann und Ernst Jäckh. Während Rohrbach gegenüber dem armenischen Volk eine positive Einstellung hatte und in ihm einen potentiellen Verbündeten Deutschlands bei einem Zerfall des Osmanischen Reiches sah, stand Naumann den Armeniern in geopolitischer Hinsicht distanziert gegenüber, und er hatte keine Scheu, negative Ansichten und Stereotypen, über sie zu verbreiten<sup>12</sup>. Noch negativer war der Journalist Ernst Jäckh eingestellt<sup>13</sup>. Er stand unter dem Einfluss rassistischer Ideen und hielt die Armenier für ein minderwertiges Volk.

Es gab aber auch Persönlichkeiten und Politiker in Deutschland, die schon lange vor dem Beginn des Ersten

---

<sup>10</sup> **Lepsius.** 1916; siehe auch **Lepsius.** 1897.

<sup>11</sup> Schon vorher hatte Heinrich Vierbücher eine Schrift zu den Verbrechen an den Armeniern verfasst, die gleichfalls ohne Wirkung blieb. Siehe: **Vierbücher.** 1930.

<sup>12</sup> **Schmuhl.** 2002, 503-516; siehe **Naumann.** 1907; **Feigel.** 1989.

<sup>13</sup> Siehe Anm. 5.

Weltkrieges entschieden für die Armenier eingetreten waren und die an ihnen in den 1890er Jahren unter Sultan Abdul Hamid dem Zweiten begangenen Massenverbrechen scharf verurteilt hatten. Solche Stimmen waren vor allem von Seiten der Sozialdemokratie zu hören. Die schärfste Kritik kam von Eduard Bernstein, der damals neben Karl Kautsky der führende Theoretiker der SPD war. Er ist im Plenum des Reichstages wiederholt zum Schutze der Armenier im Osmanischen Reich aufgetreten und hat die Reichsregierung wegen ihres Schweigens zu den Verbrechen des “roten Sultans” scharf angegriffen. Lepsius stand daher mit seiner Kritik nicht völlig allein.

Erst jetzt, das heißt nach der Niederlage des Deutschen Reiches im Weltkrieg und nach der Revolution vom November 1918, haben es die vollkommen veränderten innenpolitischen Verhältnisse möglich gemacht, dass Armin T. Wegner mit dem so umstrittenen Armenien-Thema erstens in der deutschen Öffentlichkeit überhaupt auftreten konnte, dass dies zweitens in Berlin und drittens in der “Urania” geschah, das heißt an einem Versammlungs- und Veranstaltungsort, der damals zu den wichtigsten Treffpunkten der gebildeten Welt in der deutschen Reichshauptstadt gehörte<sup>14</sup>. Die “Urania” war 1888 zu dem Zweck gegründet worden, ein breites, wissenschaftlich interessiertes Publikum mit den Entdeckungen und neuen Erkenntnissen der Naturwissenschaften und der Medizin, aber auch der Geisteswissenschaften in einer auch für den Laien verständlichen Weise bekannt zu machen. Bald umfassten die Veranstaltungen und Vortragsprogramme der “Urania” auch

---

<sup>14</sup> Ausführlich zur “Urania”, zu ihrer Bedeutung und Geschichte: [https://de.wikipedia.org/wiki/Urania\\_\(Berlin\)](https://de.wikipedia.org/wiki/Urania_(Berlin)).

sozialwissenschaftliche Themen sowie Kultur und Kunst. Wegner hätte damals für seinen Vortrag “Die Austreibung des armenischen Volkes in die Wüste” in Berlin keinen besseren Ort finden können!

### **c. Wegners für den Vortrag verarbeitete Quellen. Seine Augenzeugenschaft**

Armin T. Wegner war auf seinen Vortrag in der “Urania” vorzüglich vorbereitet, denn er hatte 1915/1916 während seines Kriegseinsatzes in Anatolien ein Tagebuch geführt und heimlich und wegen der Militärzensur nicht ohne Gefahr, das Leiden und Sterben der Armenier in der Syrischen Wüste photographisch dokumentiert. Außerdem hatte er in den Wochen vor seinem Vortrag photographische Dokumente auch noch von anderen Kriegsteilnehmern erlangen können. Darüber hinaus hat Wegner intensiv den von Lepsius 1916 veröffentlichten “Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei”, ferner die Schrift “Ein Wort an die berufenen Vertreter des deutschen Volkes”, die Martin Niepage, ein in Aleppo wirkender deutscher Lehrer und weiterer Augenzeuge der Verbrechen, 1916 in Berlin als Manuskript hatte drucken lassen<sup>15</sup>, und Ernst Sommers<sup>16</sup> Broschüre “Die Wahrheit über die Leiden des armenischen Volkes in der Wüste während des Weltkriegs”, die im Februar 1919 in Frankfurt am Main erschienen war, studiert und verarbeitet.

Gestützt auf seine Tagebuchaufzeichnungen, hat Wegner im Frühjahr 1919, also etwa zu derselben Zeit wie der “Urania”-Vortrag, die Schrift “Weg ohne Heimkehr. Ein Martyrium in

---

<sup>15</sup> Niepage. 1916.

<sup>16</sup> Sommer. 1919.

Briefen” im Egon Fleischel Verlag, Berlin, veröffentlicht<sup>17</sup>. In dieser Schrift behandelt Wegner in literarischer Form, wie ihr Titel zeigt, dasselbe Thema wie in seinem Vortrag - die Austreibung des armenischen Volkes “ins Nichts” (Talaat Pascha), in die Vernichtung, in den Untergang.

#### **d. Wegners Vortrag und sein “Offener Brief” an den US-Präsidenten W. Wilson**

Der Zeitpunkt des “Urania”-Vortrages ist noch in einer anderen Hinsicht interessant und bedeutsam: Kurz zuvor, im Februar 1919, hatte Wegner nämlich einen Offenen Brief an den damaligen Präsidenten der USA, Woodrow Wilson, geschrieben und veröffentlicht, in dem er den Präsidenten an die Leiden des armenischen Volkes im Osmanischen Reich erinnerte und auf das Recht der Armenier hinwies, in einem eigenen Staat zu leben. Der Brief trägt den Titel “über die Austreibung des armenischen Volkes in die Wüste” und erweist sich damit als eine unmittelbare Vorarbeit zu dem “Urania-Vortrag”.

Präsident Wilson war für den “Offenen Brief” die richtige Adresse, denn er hatte im Januar 1918 in seinem berühmten “14-Punkte-Programm” das Selbstbestimmungsrecht der Völker als zentrales Prinzip für die territoriale und politische Neuordnung Europas nach dem Weltkrieg herausgestellt. Die Pariser Friedenskonferenz hatte am 19. Januar 1919 in einer Resolution beschlossen, u.a. Armenien vom Osmanischen Reich, mit der politischen Perspektive abzutrennen, einer der Siegermächte des Krieges ein Mandat für die vorläufige Verwaltung Armeniens zu erteilen. Die Augen richteten auf die USA, die in den folgenden Monaten die Möglichkeit der Übernahme eines solchen Mandats

---

<sup>17</sup> 1920 erschien die 2. Auflage im “Sibyllen-Verlag” in der Stadt Dresden.

prüften.

Es zeugt gleichermaßen von dem wachen politischen Verstand Armin T. Wegners und seinem Engagement für die Sache Armeniens und die armenischen Interessen, dass er sich in dieser Phase, als es in Paris um die Bildung eines Ost- und Westarmenien umfassenden Nationalstaates ging, in die öffentliche Diskussion einschaltete. Leider nahm das Schicksal Armeniens in den Pariser Friedensverhandlungen eine andere Richtung als Wegner gehofft hatte. Zwar war Präsident Wilson bereit, das Mandat zu übernehmen, aber der US-Senat verweigerte seine dafür erforderliche Zustimmung (31.5.1920). Stattdessen wurde mit der Türkei der Friedensvertrag von Sèvres geschlossen (10.8.1920), der aber toter Buchstabe blieb.

#### **e. Wirkung und Reaktionen auf Wegners Vortrag in der Berliner Öffentlichkeit**

Es kennzeichnete die politischen Wirrnisse im Winter 1918/1919 im Deutschen Reich und warf zugleich einen tiefschwarzen Schatten auf die damals in Berlin herrschenden Verhältnisse, dass just zu der Zeit, als Wegner seine politischen Aktivitäten dort entfaltete und seinen Vortrag in der “Urania” hielt, ausgerechnet die beiden Hauptverantwortlichen für den Völkermord an den Armeniern, Talaat Pascha und Enver Pascha, nach Deutschland fliehen und für einige Monate in Potsdam untertauchen konnten. Ein deutsches U-Boot hatte Enver und Talaat Anfang November 1918, kurz nachdem sie aus ihren Ämtern entlassen worden waren, zur Flucht verholfen. So entkamen die beiden Hauptkriegsverbrecher des Osmanischen Reiches ihrer Bestrafung in der Türkei. Auf Druck der Alliierten wurden sie im Juli 1919 in Konstantinopel durch ein türkisches

Kriegsgericht in Abwesenheit u. a. wegen der von ihnen veranlassten Massenvernichtung der Armenier zum Tode verurteilt. Die deutschen Behörden lehnten ihre Auslieferung an die osmanische Regierung ab. Talaat entging seinem Schicksal bekanntlich nicht: er wurde im März 1921 in Berlin erschossen, der Täter-Soghomon Tehlirian-hingegen überraschenderweise freigesprochen. Das Gericht begründete seine Entscheidung damit, dass Tehlirian infolge der Ermordung seiner Familie während der Austreibung der Armenier durch türkische Kommandos traumatisiert worden sei. Er sei deswegen schuldunfähig und könne daher nach deutschem Strafrecht nicht zur Verantwortung gezogen werden.

Das Berliner Publikum konnte auf Grund des Titels, unter welchem der Vortrag in der “Urania” angekündigt war, zumindest ahnen, dass Armin T. Wegner das am armenischen Volk während des soeben zu Ende gegangenen Krieges begangene ungeheuerliche Verbrechen und die problematische Rolle des kaiserlichen Deutschlands als “Waffenbruder” der Türkei scharf kritisieren würde. Der Vortragssaal in der “Urania” war denn auch an jenem 19. März 1919 voll besetzt. Das Publikum bestand überwiegend aus in Berlin lebenden Armeniern, aber auch viele Türken waren erschienen und natürlich deutschen Offizieren und anderen Kriegsteilnehmer. Der Saal war daher von knisternder Spannung erfüllt. Wegner war sich der Brisanz dieser Situation wohl bewusst, aber er ließ sich davon nicht einschüchtern. Im Gegenteil: Er illustrierte seinen Vortrag mit den seiner Zeit heimlich aufgenommenen Lichtbildern, die dem Publikum die am armenischen Volk von Türken und Kurden begangenen Unmenschlichkeiten drastisch vor Augen führten und darüber hinaus geeignet waren, eine

Mitverantwortung des Deutschen Reiches an den Verbrechen zu belegen. Teilnehmer bestritten wütend die Echtheit der Bilder, und es kam zu Tumulten und Schlägereien. In der “Berliner Zeitung am Mittag” war am folgenden Tage zu lesen: “In dem sonst so friedlichen wissenschaftlichen Theater kam es gestern zu tumultuarischen Szenen. Dr. Armin T. Wegner, ein gründlicher Kenner Armeniens, hielt einen Lichtbildervortrag über die Austreibung des armenischen Volkes in die Wüste. Ein Türke, der in einer der ersten Reihen saß, störte fortwährend durch Zwischenrufe die Ausführungen des Redners. Er wurde unsanft aus dem Saale entfernt, und es trat für kurze Zeit wieder Ruhe ein. Bald aber gab es bei einem Bild wieder erregte Zwischenrufe. Einige Türken schrien: Das Bild sei gefälscht und gerieten mit den anwesenden Armeniern in heftige Auseinandersetzungen... Im Parterre kam es zwischen Vertretern der beiden Nationalitäten zu einer regelrechten Prügelei. Nur mit Mühe gelang es, die Ruhestörer zu entfernen und den Vortrag zu Ende zu führen. Aber in der Garderobe ging die Schlägerei von neuem los”.

Die Öffentlichkeit reagierte unterschiedlich auf Wegners Vortrag und auf die einige Monate später veröffentlichte, oben erwähnte Dokumentation von Johannes Lepsius. Ein Teil der Presse verharrete in ihrer türkenfreundlichen, antiarmenischen Einstellung und verurteilte Wegner als unpatriotischen “Nestbeschmutzer”. Insgesamt überwogen die Stimmen, die von einer Mitschuld des Deutschen Reiches und seiner während des Weltkrieges in osmanischen Diensten stehenden deutschen Offiziere an den Verbrechen gegenüber dem armenischen Volk nichts wissen wollten. Nicht selten wurden die antiarmenischen Aktionen der türkischen Regierung mit angeblichen

Erfordernissen des Krieges gerechtfertigt oder die Massenverbrechen überhaupt geleugnet. Einflussreich für die Einschätzung der Ereignisse waren die schon Ende 1919 veröffentlichten Erinnerungen General Otto Liman von Sanders<sup>18</sup>. Zwar stellte er die “türkischen Armenierverfolgungen” nicht in Abrede, aber er bagatellisierte sie. Den Vorwurf einer deutschen Mitschuld wies er als “levantinische Verleumdung” scharf zurück. Wegner trat in Pressekonferenzen gegen solche Stimmen, die das Verbrechen am armenischen Volk leugneten oder verharmlosten, nicht nur entschieden auf, sondern er scheute sich nicht, mit starkem moralischem Pathos “das Schicksal des armenischen Volkes im Kriege als eine Menschheitsfrage ersten Ranges” zu bezeichnen.

#### **f. Der Prozess wegen der Tötung Tala`at Paschas in Berlin und Raphael Lemkin**

Schon damals, unmittelbar nach dem Weltkrieg, reagierte Armin T. Wegner auf die Ungeheuerlichkeit der an dem armenischen Volk verübten Verbrechen mit einer humanen und zugleich politischen Sensibilität, von der später auch Raphael Lemkin beherrscht wurde und die ihn 1944 veranlasste, für die Bezeichnung jener Verbrechen des Begriffs des “genocide”, des Völkermords, zu prägen<sup>19</sup>. Lemkin hatte sich als Philologie-Student in Lemberg (Lvóv), das berühmt für seine große armenische Gemeinde war, mit dem Prozess gegen Soghomon Tehlirian in Berlin beschäftigt. Armin T. Wegner hatte den Prozess im Gericht persönlich beobachtet und zu der 1921 veröffentlichten Dokumentation des Prozesses das Vorwort

---

<sup>18</sup> **Sanders.** 1920.

<sup>19</sup> **Lemkin.** 1944.

geschrieben<sup>20</sup>. Für Raphael Lemkin bewirkte jener Prozess eine Wende in seinem Leben: Durch einen seiner Professoren hatte er erfahren, dass es nicht möglich gewesen war, Talaat in Deutschland vor Gericht zu bringen, weil das damals im Völkerrecht für absolut gehaltene Prinzip der staatlichen Souveränität es nicht zuließ, jemand wegen seiner Verantwortung selbst für die barbarischsten Verbrechen in einem anderen Staat strafrechtlich zu verurteilen. Für Lemkin ist das der Anlass gewesen, sein Studienfach zu wechseln und Jura mit dem Ziel zu studieren, diese Rechtslage zu kritisieren und auf ihre Änderung hinzuwirken.

### **Wissenschaftliche Kontroversen in Deutschland um Armin T. Wegners Bedeutung als Augenzeuge des Völkermords an den Armeniern**

Armin T. Wegners Lichtbildervortrag “Die Austreibung des armenischen Volkes in die Wüste” ist bis zum heutigen Tage in Deutschland Gegenstand von Kontroversen. Im Unterschied zu der Zeit unmittelbar nach dem Ersten Weltkrieg haben sie sich jedoch von der Politik auf die Ebene der Wissenschaften verlagert. Insbesondere geht es dabei nicht mehr darum, ob das armenische Volk im Osmanischen Reich das Opfer eines Völkermordes geworden ist und ob das Deutsche Reich eine Mitschuld an jenen Verbrechen trägt – beides wird in Deutschland heute von Historikern und Juristen nicht mehr ernstlich bestritten, sondern es geht um die Frage, welchen Rang, Glaubwürdigkeit und Authentizität Armin T. Wegner als Augenzeuge der Verbrechen an dem armenischen Volk besitzt und welche geschichtliche Bedeutung seien mit literarischem,

---

<sup>20</sup> Hofmann.1980.

künstlerischem Anspruch verfassten Darstellungen des tragischen armenischen Schicksals zukommt.

Sehr skeptisch und distanziert äußert sich zu diesen Fragen der Historiker Martin Tamcke in seiner Habilitationsschrift (1993)<sup>21</sup>. Zwar stellt er nicht in Abrede, dass Wegner 1915/16 Zeuge des Leidensweges der Armenier in Ostanatolien war, aber er vertritt die These, dass wegen Wegners hochgradiger Egozentrik, problematischer psychischer Disposition, wegen seiner literarischen Ambitionen und der von Wegner in Anspruch genommenen künstlerischen Freiheit im Umgang mit den Fakten die von ihm gelieferten Darstellungen des genozidalen Geschehens als historische Quelle nur geringen oder keinen Wert besäßen.

Zwar sehen auch andere herausragende Kenner von Leben und Werk Armin T. Wegners, Martin Rooney<sup>22</sup> und Andreas Meier<sup>23</sup>, mit kritischem Blick auf das Spannungsverhältnis zwischen dem Selbstverständnis Wegners als Schriftsteller einerseits und als Zeitzeuge andererseits, aber sie urteilen über Wegners öffentliche Zeugnisse über die an den Armeniern begangenen Verbrechen und über Wegners Eintreten für die Belange des armenischen Volkes ungleich verständnisvoller und gerechter als Tamcke<sup>24</sup>.

Das gilt auch für andere Autoren. Vollauf zuzustimmen ist dem abgewogenen Urteil von Ulrich Sieg. Er resümiert (2012) in seiner Rezension der von Andreas Meier mit

---

<sup>21</sup> **Tamcke.** 1996.

<sup>22</sup> **Rooney.** 1984.

<sup>23</sup> **Rooney.** 1984.

<sup>24</sup> Meier distanziert sich insofern von Tamckes Position. Siehe Armin T. Wegner. Die Austreibung des armenischen Volkes (Anm. 2), S. 6 (mit Fußnote 6).

bewundernswerter Akribie veranstalteten wissenschaftlichen Edition des “Urania-Vortrages”: “Wegner, der mit seinem Vortrag Zeugnis für das armenische Volk ablegen wollte, war Dichter und nicht Historiker. So wichtig sein Bericht für die Geschichte des Genozids ist, seine Bedeutung liegt nicht primär in den mitgeteilten Fakten, sondern im Gesamtbild der unfassbaren Tragödie. Wegner spricht weniger als Beobachter denn als engagierter Schriftsteller, was für den Fachhistoriker manche Frage aufwirft und ihn gelegentlich irritieren mag. Doch gerade, weil der Vortrag *cum ira et studio* geschrieben ist, besitzt er noch heute eine ganz ungewöhnliche Lebendigkeit”<sup>25</sup>.

Zu einem ähnlich differenzierenden und fairen Urteil gelangt auch Johanna Wernicke-Rothmayer, indem sie Armin T. Wegner als “Schriftsteller – Reisender und Menschenrechtsaktivist” würdigt<sup>26</sup>.

Was das eingangs aufgeworfenen Problems, nämlich die Bedeutung Armin T. Wegners als Augenzeuge der Verbrechen am armenischen Volk im Osmanischen Reich 1915/16 anbelangt, ist aber letztlich als entscheidend festzuhalten, dass hiervon Wegners “Kriegstagebuch” (1916) authentisch Zeugnis ablegt. Das wird, bisweilen fast widerwillig, auch von Martin Tamcke eingeräumt<sup>27</sup>.

Von jenen bedrückenden und bedrückenden Erlebnissen ist Armin T. Wegners aufrüttelnder, mit edler Absicht verfasster

---

<sup>25</sup> <http://www.sehepunkte.de/2012/03/21101.html>.

<sup>26</sup> **Wernicke-Rothmayer.** 2011; dieselbe: Vortrag vom 14.1.2012 im Lepsius-Haus in Potsdam. <http://www.lepsiushaus-potsdam.de/uploads/-images/Publikationen/vortrag-ein-engagierter-dichter-zwischen-weltkrieg-und-machtergreifung-johanna-wernicke-rothmayer.pdf>.

<sup>27</sup> **Tamcke.** 2001. 86-96. derselbe: Armin T. Wegner. Augenzeuge des Völkermords an den Armeniern, in: **Wernicke-Rothmayer.** 2011, s. 70-80.

“Urania-Vortrag” getragen und beherrscht.

## BIBLIOGRAPHY

**Bloxham Donald.** 2002, Power Politics, Prejudice, Protest and Propaganda: A Reassessment of the German Role in the Armenian Genocide of World War I, in: Kieser, Hans-Lukas/ Schaller, Dominik J. (Hrsg.): Der Völkermord an den Armeniern und die Shoah. The Armenian Genocide and the Shoah, Zürich, 565 s.

**Dadrian Vahakn N.** 1996, German Responsibility in the Armenian Genocide, Watertown (Mass.), 304 s.

**Feigel Uwe.** 1989, Das Evangelische Deutschland und Armenien. Die Armenienhilfe deutscher evangelischer Christen seit dem Ende des 19. Jahrhunderts im Kontext der deutsch-türkischen Beziehungen, Göttingen, 344 s.

**Gottschlich Jürgen.** 2015, Beihilfe zum Völkermord. Deutschlands Rolle bei der Vernichtung der Armenier, 2. Auflage Berlin, 343 s.

**Hofmann Tessa.** 1980, Der Prozess Talaat Pascha: Stenographischer Bericht über die Verhandlungen gegen den des Mordes an Talaat Pascha angeklagten armenischen Studenten Salomon Teiririan vor dem Schwurgericht des Landgerichts III zu Berlin. Mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang. Berlin: Deutsche Verlagsgesellschaft für Politik, 1921 (Neuausgabe: Der Völkermord an den Armeniern vor Gericht: Der Prozess Talaat Pascha. Hrsg. u. eingeleitet von Tessa Hofmann, Göttingen /Wien), 174 s.

**Jäckh Ernst.** 1915, Die deutsch-türkische Waffenbrüderschaft, Stuttgart/. Berlin, 30 s.

**Kampen Wilhelm Van.** 1968, Studien zur deutschen Türkeipolitik in der Zeit Wilhelms II. (phil. Dissertation), Kiel, 551 s.

**Lemkin Raphael.** 1944, Axis Rule in Occupied Europe, Washington D. C., 674 s.

**Lepsius Johannes.** 1897, Armenien und Europa. Eine

Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland, 3. Auflage, Berlin, 284 s.

**Lepsius Johannes.** 1916, Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei, Potsdam, 296 s.

**Lepsius Johannes.** 1919, (Hrsg.): Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 628 s.

**Meier Andreas** (Hrsg.). 2011, Armin T. Wegner. Die Austreibung des armenischen Volkes in die Wüste. Ein Lichtbildervortrag (mit einem Essay von Wolfgang Gust), Göttingen, 215 s.

**Naumann Friedrich.** 1907, Asia, 6. Auflage, Berlin, 166 s.

**Nickisch Reinhard.** 1982, Armin T. Wegner. Ein Dichter gegen die Macht. Grundlinien einer Biographie des Expressionisten und Weltreporters Armin T. Wegner (1886-1978), Wuppertal, 200 s.

**Niepage Martin.** 1916, Ein Wort an die berufenen Vertreter des deutschen Volkes, Potsdam, 14 s.

**Rooney Martin.** 1984, Leben und Werk Armin T. Wegners (1886-1978) im Kontext der soziopolitischen und kulturellen Entwicklungen in Deutschland, Frankfurt am Main, 624 s.

**Sanders von Liman.** 1920, Otto: Fünf Jahre Türkei, 2. Auflage, Berlin, 422 s.

**Schmuhl Hans-Walter.** 2002, Friedrich Naumann und die “armenische Frage”, in: Kieser, Hans-Lukas/ Schaller, Dominik J. (Hrsg.): Der Völkermord an den Armeniern und die Shoah. The Armenian Genocide and the Shoah, Zürich.

**Sommer Ernst.** 1919, Die Wahrheit über die Leiden des armenischen Volkes in der Türkei während des Weltkriegs, Frankfurt am Main (Februar).

**Tamcke Martin.** 1996, Armin T. Wegner und die Armenier. Anspruch und Wirklichkeit eines Augenzeugen, Göttingen 1993, 2. Auflage Hamburg, 288 s.

**Tamcke Martin.** 1999, Briefwechsel Franz Werfel – Armin T. Wegner, in: **Gaede**, Katharina (Hrsg.): Spuren in der Vergangenheit – Begegnungen in der Gegenwart. Festschrift für Hans-Dieter

Döpmann, Berlin, s. 154-160.

**Tamcke Martin.** 2001, Armin T. Wegners “Die Austreibung des armenischen Volkes in die Wüste”. Einführung zum unveröffentlichten Vortragstyposkript vom 19. März 1919 in der Urania zu Berlin, publiziert in: Martin Tamcke: Orientalische Christen zwischen Repression und Migration, Beiträge zur jüngeren Geschichte und Gegenwartslage (Studien zur Orientalischen Kirchengeschichte, Band 13), Hamburg.

**Vierbücher Heinrich.** 1930, Armenien 1915. Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Die Abschlachtung eines Kulturvolkes durch die Türken, Hamburg-Bergedorf.

**Wernicke-Rothmayer Johanna,** 2012, Armin T. Wegner: Ein engagierter Dichter zwischen dem Ersten Weltkrieg und der Machtergreifung, Vortrag vom 14.1. im Lepsius-Haus in Potsdam, <http://www.lepsiushaus-potsdam.de/uploads/images/Publikationen-/vortrag-ein-engagierter-dichter-zwischen-weltkrieg-und-machtergreifung-johanna-wernicke-rothmayer.pdf>

**Wernicke-Rothmayer Johanna.** 2011, (Hrsg.): Armin T. Wegner: Schriftsteller-Reisender-Menschenrechtsaktivist, Göttingen.

**Մանուշակ Վ. Մարկոսյան,** Համբուրգի համալսարան, հայցորդ, Արմին Թեոֆիլ Վեգներ: «Հայ ժողովրդի արտաքսումը անապատներ» (գեկույցը լուսանկարներով, Բեռլին, «Ուրանիա», մարտ, 1919թ.)

## Ամփոփում

Սույն հոդվածով փորձ է արվում համակողմանիորեն ներկայացնել Արմին Թ. Վեգների՝ «Հայ ժողովրդի արտաքսումը անապատներ» ծավալուն գեկույցը, որն արևմտահայության

բռնի տեղահանման ու բնաջնջման ականատեսի իր վկայություններով, լուսանկարներով և հարակից այլ փաստավավերագրական նյութերով Վեգները ներկայացրել է Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո՝ 1919 թ. մարտի 19-ին «Ուրանիա» սրահում:

Արմին Թ. Վեգներն այդ սարսափելի իրադարձությունների մասին իր վկայություններով ներկայացավ գերմանացի հասարակությանը՝ քաջ գիտակցելով, որ Հայոց ցեղասպանության իրողության լուսաբանումը հատկապես կարևոր էր հենց Գերմանիայում, քանի որ այն այդ պատերազմում Օսմանյան կայսրության կարևորագույն դաշնակիցն էր: Զեկույցում Վեգները խիստ քննադատության է Ենթարկում Հայոց ցեղասպանությանը մեղսակից կայսերական Գերմանիային: Նա իր ծավալուն զեկույցի մեջ ներկայացնելով հայ ժողովրդի հանդեպ իրագործված ոճրագործությունը, ականատեսի վկայություններով հանգամանորեն ներկայացնում է հայրենի բնօրդանում ապրող ու արարող ժողովրդի բնաջնջումն ու հայրենազրկումը, առաջ քաջում քաղաքական ու պատմագիտական հարցադրումներ: Զեկույցում Ա. Վեգները զուգահեռաբար ցուցադրել է ցեղասպանության սահմոկեցուցիչ տեսարաններ փաստող մոտ 100 լուսանկար:

**Բանալի բառեր՝** Արմին Վեգներ, Մարտին Թամբե, բռնի տեղահանություն, Կայսերական Գերմանիա, Օսմանյան կայսրություն, գերմանական հանրություն, Ուրանիայի դասախոսություն:

**Манушак В. Маркосян, Гамбургский университет, докторант, Доклад Армина Теофила Вегнера, «Депортация армянского народа в пустыни» (с фотографиями, Берлин, март, 1919)**

### **Резюме**

В статье детально представлен просторечный доклад Армина Т. Вегнера «Депортация армянского народа в пустыни», являвшимся очевидцем насилия переселения и истребления западных армян. Доклад, основанный на свидетельствах А. Вегнера, фотографиях и других документальных материалах, был представлен общественности после окончания Первой мировой войны 19 марта 1919 г. в зале «Урания».

Армин Т. Вегнер, озвучивший эти страшные события, осознавал важность освещения Геноцида армян для немецкого общества, поскольку Германия являлась главным союзником Османской империи в этой войне. В своем докладе А. Вегнер выступил с жесткой критикой кайзеровской Германии, причастной к Геноциду армян. Говоря о чудовищном преступлении, совершенном в отношении армянского народа, Вегнер, будучи свидетелем, во всех подробностях представил картину истребления и депатриации народа, жившего и созидавшего на своей исторической родине. На основе свидетельств очевидцев им были подняты важные вопросы политического и исторического характера. Параллельно с изложением фактов и событий А. Вегнер продемонстрировал около 100 фотографий, свидетельствующих об ужасающих картинах геноцида.

**Ключевые слова:** Армин Вегнер, Мартин Тамке, депортация, Кайзеровская Германия, Османская империя, немецкое общество, лекция Урании.

## ՄԱՆԵԿ. ԿՈՆԻԿԻՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիվուտ,

Կրտսեր գիտաշխատող

Koninyan.mane@yandex.com

ID 0009-0002-9781-3712

DOI:10.59523/1829-4596.2024.2(29)-126

### ԿԻԼԻԿԻԱՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

### ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 1918-1921 ԹԹ. \*

**Բանալի բառեր՝** Մուլյոսի գինադադար, հայ գաղթականներ, Հայկական լեգեոն, Կիլիկիա, Ֆրանսիա, Մուստաֆա Քեմալ, Ժորժ Պիկո:

### Ներածություն

Ենթադրվում էր, որ Առաջին աշխարհամարտում հաղթանակած Անտանտի երկրները հաղթողի իրավունքով իրենց կամքն էին թելադրելու ոչ միայն Քառյակ միության երկրներին, այլև նրանց դաշնակից ու համախոհ Օսմանյան կայսրությանը, ինչի հետ մեծ հոգսեր էր կապում ամբողջ հայ ժողովուրդը: Սակայն պատերազմի ավարտից հետո պարզվեց, որ Անտանտի տերություններն այնքան էլ հետևողական ու վճռական չեն հայ ժողովրդին տված խոստումները կյանքի կոչելու և Օսման-

\* Ներկայացվել է 26.X.2024 թ., գրախոսվել է 29.X.2024 թ., ընդունվել է դպրագրության 15.XII.2024 թ.:

յան կայսրության վրա համապատասխան ճնշումներ բանեցնելու հարցում: Սույն հոդվածում շեշտը դրվել է կիլիկիահայության վերադարձի և թուրք-ֆրանսիական փոխհարաբերությունների համատեքստում նրանց խախտված իրավունքների հետ կապված հարցերի ուսումնասիրության վրա: Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփող միջազգային ակտերից առաջինը, որով անդրադարձ կատարվեց կիլիկիահայության իրավունքների պաշտպանությանը, դաշնակիցների և Օսմանյան կայսրության միջև 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուտրոսի գինադադարն էր: Մուտրոսի պայմանագրի 7-րդ հոդվածով դաշնակիցներն իրավունք էին ստանում գրավելու Օսմանյան կայսրության ցանկացած տարածք, եթե ստեղծվեր դաշնակիցների անվտանգությանն սպառնացող իրավիճակ, իսկ 16-րդ հոդվածի համաձայն թուրքական զորքերը պետք է դուրս բերվեին Կիլիկիայից<sup>1</sup>: Ըստ Վերոհիշյալ հոդվածների, դաշնակիցները, մասնավորապես Ֆրանսիան<sup>2</sup>, որ ստանձնել էր Կիլիկիայի և այնտեղ բնակվող քրիստոնյաների պաշտպանությունը, պարտավոր էր քայլեր ծեռնարկել՝ վերջիններիս պաշտպանելու հետագա անկար-

<sup>1</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923). 1972, 538-539:

<sup>2</sup> Համաձայն 1916 թ. Սայքս-Պիկոյի համաձայնագրի, Կիլիկիան պետք է անցներ Ֆրանսիայի վերահսկողության տակ, տե՛ս Brémond E. 1977, 341.

գություններից, կենսագործելու Կիլիկիային վերաբերող Մուղրոսի զինադադարի հոդվածների կատարումը՝ կանխելով Կիլիկիայում քեմալականների հայաջնջ քաղաքականության գործադրումը:

### **Կիլիկիահայության վերադարձի նախադրյալները**

Մուղրոսի զինադադարից հետո Անտանտի տերությունները և, հատկապես, Ֆրանսիան, շռայլ խոստումներ էին տալիս Սիրիայում և Միջագետքում ապաստանած գաղթական հայությանը՝ կոչ անելով վերադառնալ Կիլիկիա: Արևմտահայ գաղթականությունը, ոգևորված դաշնակիցների խոստումներից, Օսմանյան կայսրության նոր սովորական Մուհամմեդ VI Վահեդդինի (1918-1922 թթ.) «արդարացի» քաղաքականությունից<sup>3</sup> և, հատկապես, 1918 թ. հոկտեմբերի 19-ին օսմանյան խորհրդարանին Ահմեդ Ռիզա փաշայի կառավարության ներկայացրած ծրագրից<sup>4</sup>, որի համաձայն կայսրության հպատակներն անարգել կարող էին վերադառնալ իրենց նախկին բնակավայրեր՝ ստանալով կրած նյութական վնասի փոխհատուցման երաշխիքներ, աստիճանաբար

<sup>3</sup>Սովորական Մուհամմեդ VI Վահեդդինը սահմանափակեց իթթիհատի իշխանությունը կառավարության մեջ, ուզումական նախարարի պաշտոնից հեռացրեց Էսվերին և բանակի ընդիանուր հրամանատարությունը կենտրոնացրեց իր ձեռքում: Հետագայում էլ ձեռնարկեց երիտրուրքերի շինծու դատավարությունը՝ թուրքական պետությանը միջազգային պատասխանատվությունից ազատելու նպատակով:

<sup>4</sup> Անումյան. 2013, 32:

վերադառնում էր Կիլիկիայի իր բնակավայրեր: Հայ տարագիրների մի մասն էլ, ստանալով անվտանգության երաշխիքներ, հաստատվեցին Կ. Պոլսում, որոնք, ինչպես Զավեն արքեպիսկոպոսն է նշում, իհմնականում ներքին գավառների բնիկներ էին, մեծ մասամբ այրիներ և որբեր<sup>5</sup>:

Հարկ է նշել, որ դեռ պատերազմի տարիներին Ֆրանսիային «ապավինելու» համար կային լուրջ քաղաքան պատճառներ: Դեռևս 1916 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի խորհրդական Մարկ Սայքսի և Սիրիայում ու Կիլիկիայում Ֆրանսիական գերագույն կոմիսար ժորժ Պիկոյի միջև կայացել էր հատուկ պայմանավորվածություն՝ հայ կամավորներից հայկական ազգային լեգեոն կազմավորելու շուրջ: Հայ կամավորների կողմից ծևավորվող «Ազգային լեգեոն» կազմավորելու վերաբերյալ Պողոս Նուբարն առաջ էր քաշել մի շարք նախապայմաններ, համաձայն որոնց հայ կամավորներից կազմված լեգեոնը պետք է մասնակցեր միայն Կիլիկիայում տեղի ունեցող ռազմական գործողություններին: Վերջինիս նպատակը պետք է լիներ Կիլիկիայի ազատագրումը և պատերազմի հաղթական ավարտից հետո Կիլիկիայում Ֆրանսիայի հովանու ներքո հայկական իշխանության ծևավորումը, իսկ Հայկական լեգեոնն էլ պետք է դառնար Կիլի-

<sup>5</sup> Զաւեն Արքեպիսկոպոս. 1947, 280:

կիայի ապագա հայկական բանակի կորիզը: Ցեղասպանությունից փրկված հայ տղամարդիկ ոտքի կանգնեցին՝ կազմելու «Արևելյան լեգեոնը» (հետագայում վերանվանվեց «Հայկական լեգեոն»): Նրանք «վտանգելով ու նոյնիսկ խորտակելով իրենց ապագան, փութացած էին ռազմաճակատ, նախ՝ լուծելու մէկուկէս միլիոն նահատակուած հայութեան վրէժը, ու մանաւանդ՝ մարմին տալու հայկական Կիլիկիոյ իտէալին...»<sup>6</sup>: Դրանից զատ, դեռևս շարունակվում էր արդիական մնալ դաշնակիցների միջև կնքված Սայքս-Պիկոյի պայմանագիրը, որով Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի վերահսկողության տակ: Հայության շրջանում թևածում էին ժ. Պիկոյի խոսքերը. «Դաշնակիցների հաղթանակից հետո Ֆրանսիան իր հովանավորության ներքո ինքնավարություն է տալու Կիլիկիային»<sup>7</sup>:

Կ. Պոլիսն ու Կիլիկիան, ուր տեղակայված էին դաշնակիցների ուժերը, համեմատաբար ապահով վայրեր էին, որտեղ հայ տարագիրները կարող էին իրենց ապահով զգալ ֆիզիկական բնաջնջումից: Դաշնակիցները Կիլիկիա վերադարձող հայությանը տալիս էին կյանքի անվտանգության երաշխիքներ, որն ամրապնդվեց 1919 թ. փետրվարի 20-ին անգլո-ֆրանսիական զորքերի և թուրքական կառավարության միջև ստորագրված Մուդրոսի գինադադարի հավելվածով: Դրանով Կիլիկիայի

<sup>6</sup> Յուշամատեան Մուսա լերան. 1970, 431:

<sup>7</sup> Գասպարյան. 2005, 147:

կառավարման վերահսկողությունը հանձնվում էր ֆրանսիական գլխավորականությանը՝ անգիտական գեներալ Էդմոնդ Ալենբիին Ենթարկվելու նախապայմանով<sup>8</sup>: Պայմանագրի 7-րդ հոդվածի համաձայն, դաշնակիցների ընդհանուր իրամանատարությունը տարագիր հայությանը հավաստիացնում էր, որ վերջիններս անարգել կարող էին վերադառնալ իրենց երկիր և երաշխիքներ էր տալիս, որ վերադառնալու պարագայում «հայրենադարձներու տուները, հողերը եւ գոյքերը պիտի անմիջապէս վերադարձուին իրենց»<sup>9</sup>: Անգլո-Ֆրանսիական իրամանատարության տակ Կիլիկիան պետք է կառավարվեր մինչև 1919 թ. դեկտեմբերի 2-ը: Այնուհետև Կիլիկիայի խնամատարությունը պետք է ամբողջությամբ փոխանցվեր Ֆրանսիային:

Հայ գաղթականները, որոնք կենտրոնացել էին հիմնականում Հալեպում և Դամասկոսում, ապրում էին անմարդկային պայմաններում՝ զրկված ամենատարրական պայմաններից: Նրանց գոյությունն ապահովվում էր՝ շնորհիվ մի քանի հայկական ու միջազգային բարեգործական կազմակերպությունների և դաշնակիցների ցուցաբերած հոգածության: Դամասկոսից Կահիրե՛ Եգիպտոսի Հայոց առաջնորդ Թորգոմ Եպիսկոպոսին ուղղված նամակում Պետրոս Եպիսկոպոս Սարանյանն այս-

<sup>8</sup> Էդմոնդ Ալենբին Մերձավոր Արևելքում գործող դաշնակից զորքերի գլխավոր իրամանատարն էր:

<sup>9</sup> **Եղիայեան.** 1975, 78:

պես է ներկայացնում տարագիրների վիճակը. «Կարօտովթինը չափազանց է. որբեր, այդինք եւ կարօտներ՝ գաղթականութեան մեծագոյն մասը եթէ չկազմեն, կէսէն աւելին են, որոնց մասին Սահակ կաթողիկոսը հաղորդած է Շէրիֆին եւ անզիական ու ֆրանսական ներկայացուցիչներուն: Անպատսպարներ, քուրջերու մէջ ծրարուածներ եւ մուրացիկներ լիբն են Դամասկոսի փողոցները... Ծնորհակալեաց արժանի են ֆրանսացիք, որ Սահակ կաթողիկոսի դիմումին վրայ՝ օրական սնունդ սկսան տալ»<sup>10</sup>: Ցեղասպանության սարսափին ու զրկանքները տեսած կիլիկիահայերի Կիլիկիա վերադարձն ուղղակի փրկություն կարող էր լինել վերջիններիս համար, որոնք, վերադառնալով Կիլիկիա, կվերակենդանացնեին իրենց օջախները:

Դամասկոսի և Հալեպի գաղթականները դաշնակիցների ուղեկցությամբ շոգեկառքերով պետք է տեղափոխվեին Կիլիկիա: Հալեպի գաղթականները պետք է հաստատվեին Աղանայում, իսկ Դամասկոսինը՝ Մերսինում: Կիլիկիահայության վերադարձին նպաստեցին նաև 1918 թ. դեկտեմբերից Հայկական լեգեոնի՝ Կիլիկիա մտնելու և Էդուարդ Բրեմոնինի<sup>11</sup> Աղանայի նահանգի կառավարիչ

<sup>10</sup>Եղիայեան. 1975, 79:

<sup>11</sup> 1918 թ. դեկտեմբերի 25-ին ֆրանսիական կառավարության թիվ 92189/11 հրամանով ֆրանսիացի գնդապետ Էդ. Բրեմոնը նշանակվեց «Հյուսիսային գոտոու» (Աղանայի վիլայեթ՝ բացի Սելեֆքեի կազայից)՝ «Հայաստանի կառավարիչ», տե՛ս Brémond E. 1977, 341; Հարությունյան. 2023, 221:

նշանակվելու հանգամանքները:

## Կիլիկիահայության վերադարձը և Ֆրանսիայի դիրքորոշումը

Կիլիկիայում գաղթականներին տեղավորելու համար ֆրանսիական իշխանությունների միջոցներով կառուցվում էին աղյուսաշեն և տախտակաշեն տաղավարներ: Կիլիկիայի զանազան քաղաքներում և ավաններում՝ Աղանա, Սիս, Հաճըն, Տարսոն, Մերսին, Դյորթ-Յոլ և այլն, բացվեցին որբանոցներ: Գնդապետ Բրեմոնի տվյալներով Կիլիկիայի որբանոցներում որբերի թիվը հասնում էր շուրջ 10.000-ի<sup>12</sup>: Կիլիկիայում ձևավորվում են հայ ազգային մարմիններ և կաթողիկոս Սահակ Խապայանի ջանքերով փորձ է արվում վերականգնել հայկական կյանքը, տնտեսությունը, մշակույթը: Ձևավորվում է «Նպաստաբաշխ» մարմին, ինչպես նաև՝ երեք հայ հարանվանություններից նոր Ազգային միություն՝ 15 անդամներով, որը քաղաքական իշխանության տեսակետից միակ իրավասու մարմինն էր<sup>13</sup>: Վերաբացվեցին ազգային վարժարանները, բնականոն հունի մեջ դրվեց երեխանների դաստիարակության և կրթության գործը: Համաձայն որոշ տվյալների, մինչև 1919 թ. վերջերը Կի-

<sup>12</sup> Brémont. 1921,12.

<sup>13</sup> Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան, Երևան, «Լուսակն» հրատ., ԵՀՊ ՀՀՀՅԱ, Տուի, թղթապանակ «զ», վավերագիր ՀՀ գ. 160-գ 173:

լիկիա՝ Աղանա, ԴյորթՅոլ, Մերսին, Հաճըն, Մարաշ, Այնթապ և այլ վայրեր վերադարձների թիվը հասնում էր շուրջ 150.000-ի<sup>14</sup>:

Կիլիկիա վերադարձած տարագիր հայությանը մեծ օգնություն ցուցաբերեց Հ. Բ. Ը. Միությունը: Դեռևս 1918 թ. նոյեմբերի 12-ի նրա Կենտրոնական վարչության կողմից Սահակ կաթողիկոսին ուղղված նամակով Բարեգործականը հայտնում էր, որ «Հ. Բ. Ը. Միութիւնը արդէն ի սպաս դրած է իր բարոյական եւ նիփական բոլոր միջոցները եղբայրական օգնության եւ հայրենիքի վերաշնորթեան գերազանցապէս նուիրական գործին: Ձեր Վեհափառութիւնը վստահ կրնայ ըլլալ, որ Կեդրոնական Վարչական ժողովս ըրաւ եւ պիտի ընէ ինչ որ հնարաւոր է աղէտեալներու վիճակը բարելաւելու համար»<sup>15</sup>: Կիլիկիայի տարբեր վայրերում՝ Հաճընում, Մերսինում, Աղանայում, ԴյորթՅոլում, Մարաշում, Տարսունում և այլուր բացվեցին Հ. Բ. Ը. Միության մասնաճյուղեր, որոնք իրենց վրա վերցրին գաղթական հայերի հոգածության գործը՝ նրանց ապահովելով սննդով, հագուստով, դեղորայքով: Նրանք խնամքի կարուտներին ապահովեցին հիվանդանոցով, որբերին՝ տեղավորեցին որբանոցներում: Այս առումով հատկանշական էր Քելեկյան որբանոցի վերաբացումը: Այսպիսով, «Բարեգործականը օր աւուր կ'ընդլայնե իր գործոնեութիւնը եւ Կիլի-

<sup>14</sup> Թոփուլյան. 1986, 162:

<sup>15</sup> Եղիայեան. 1975, 80:

կիոյ կարօս ժողովուրդին համար նախախնամական բարիք մը կը դառնայ»<sup>16</sup>: Բարեգործականը բացեց «Որբանպատ» հիմնադրամ՝ հօգուտ որբերի կազմակերպելով տարաբնույթ նվիրատվություններ: Կիլիկիայի տարբեր վայրերում բացվում էին արհեստանոցներ՝ փորձելով այրիներին ապահովել աշխատանքով:

Կիլիկիայի վերաշինման գործին նպաստեց նաև կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Կիլիկիայում: Այստեղ հարկ է անդրադառնալ Սահակ Խապայան կաթողիկոսի անմնացորդ նվիրումին ու գործունեությանը: Նա 1919 թ. հունվարի 8-ին նամակով դիմում է գեներալ Ալենբրիին և առաջարկում՝ ա. Կիլիկիայի խաղաղ զարգացումն ապահովելու համար զինաթափել տարածքի մահմեդական բնակչությանը, բ. կանխել հայերի շրջանում թուրքերի կողմից կազմակերպվող խուճապային տրամադրությունների տարածումը, գ. պաշտոններ չտրամադրել 1915 թ. հայկական կոտորածների կազմակերպիչներին և համախոհներին, դ. վերացնել բանկային դեպոզիտներում պահվող տարագրված հայերի գույքի կալանքները<sup>17</sup>: Դրանից զատ, առաջին աշխարհամարտի ընթացքում թուրքական իշխանությունների կողմից Սսի կաթողիկոսությանը հասցված նյութական վնասները վերականգնելու նպատակով Սահակ կաթողիկոսը պատրաստեց Կիլիկիո կաթողիկոսարանի գույ-

<sup>16</sup> Միութիւն. 1919, № 70:

<sup>17</sup> ԳԱԹ արխիվ, ֆ. Ա. Զոպանյան, գ. 9981, լի բաժին, թ. 1-3:

քի ցանկ՝ դրան կցելով կալվածքների ու շինությունների նյութական արժեքի մասին տեղեկություններ՝ ներկայացնելով Կիլիկիայում հաստատված ֆրանսիական Գերագույն կոմիսարությանը<sup>18</sup>: Սակայն ֆրանսիական իշխանություններն իրականում այդ ուղղությամբ գործնական որևէ քայլ չեն արկեցին, քանի որ կիլիկիահայության ճակատագիրը գնալով հայտնվում էր ծևավորվող նոր աշխարահաքաղաքական բարդ հանգույցում:

1919 թ. հունիսի 23-ին քեմալականների գումարած Էրզրումի կոնֆերանսում դրվել էր ոչ միայն հայկական նահանգները, այլև Կիլիկիան Օսմանյան կայսրության կազմում պահելու հարցը: Քեմալը հայտարարում էր, որ արևելյան նահանգների հաշվին նախատեսվում է ստեղծել «Հայաստան», իսկ Աղանայի, Կոզանի և Չրջակատարածքների հաշվին «Կիլիկիա» անունով մեկ այլ Հայաստան»<sup>19</sup>, մի բան, որի հետ չէր կարող հաշտվել օրեգոր հզորացող քեմալական շարժումը: Քեմալականների հրավիրած Էրզրումի, ապա դրան հաջորդած Սեբաստիայի կոնգրեսներում (1919 թ. սեպտեմբերի 4-11-ը) հատուկ որոշում ընդունվեց վճռական պայքար մել բոլոր այն շարժումների դեմ, որոնց նպատակը կլիներ անկախ Հայաստանի ստեղծումը: Մուստաֆա Քեմալն իր ճառում ասում էր. «Միավորելու ենք մեր բոլոր ուժերը և արյան մինչև վերջին կաթիլը պաշտպանելու ենք մեր հայրենի-

<sup>18</sup> Մարտության. 2023, 278:

<sup>19</sup> Կեմալ. 1929, 222.

քը բոլոր տեսակի ներխուժումներից՝ հատկապես հունական կամ հայկական պետություն ստեղծելու ձգտումներից»<sup>20</sup>: Քեմալականների որդեգրած այդ քաղաքականությունը Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային ստիպեցին վերանայելու նրանց հետ իրենց հարաբերությունները, հատկապես, եթե նրանք սկսել էին ակտիվացնել թուրք-բոլշևիկյան հարաբերությունները: Ֆրանսիական դիվանագիտությունը քայլեր էր ձեռնարկում Կիլիկիայում ռազմական գործողությունները դադարեցնելու և Անկարայի հետ համաձայնության գալու նպատակով: 1919 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ Սիրիայում և Կիլիկիայում ֆրանսիական գերագույն կոմիսար Ժորժ Պիկոյի և Մուստաֆա Քեմալի հանդիպումը, որտեղ առավել հանգամանալից քննարկման առարկա դարձավ Կիլիկիայի հարցը: Քեմալն ակնարկում էր, որ ազգայնականները կիամաձայնվեն զիշել միայն Ձեզիրեն, Իրաքը, Սիրիան, բայց երբեք չեն հրաժարվի Կիլիկիայից՝ «իրենց մարմնի մի մասից»<sup>21</sup>: Հանդիպման ժամանակ քննարկվեց նաև ազգային փոքրամասնությունների հարցը: Ժորժ Պիկոն Քեմալից պահանջեց քրիստոնյաների անվտանգության ու ապահովության երաշխիքներ՝ վկայակոչելով Կիլիկիայի բնակչության, հատկապես փոքրամասնությունների հանդեպ ֆրանսիայի պարտավորությունները: Սակայն իրականում այդ հարցում որևէ դրա-

<sup>20</sup> Կեմալ. 1929, 414.

<sup>21</sup> Սահակյան. 1970, 73-79:

կան տեղաշարժ չնկատվեց քեմալականների քաղաքականության մեջ: Քեմալ-Պիկո հանդիպումն ավարտվեց ձեռք բերված համաձայնությամբ, ըստ որի Կիլիկիան պետք է վերադարձվեր թուրքերին, որոնք, սակայն, պետք է ճանաչեին Ֆրանսիայի իրավունքը տեղական վարչության և փոքրամասնությունների հովանավորության հարցում<sup>22</sup>: Հանդիպման ընթացքում ակնհայտ դրսևորվեց ֆրանսիական կողմի «զիջողական» քաղաքականությունը՝ ամեն կերպ խոաափելու թուրք-ֆրանսիական բախումներից: Պարզ էր, որ ֆրանսիական քաղաքականությունը պետք է հաշվի նստեր քեմալականների հետ՝ նաև հետագայում զարգացող իրադարձությունների շրջանակներում: Կիլիկիայի Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Միհրան Տամատյանը, անդրադառնալով ֆրանսիայի երկդիմի քաղաքականությանը, նշում է, որ կիլիկիահայության պատության հիմնական պատճառը միջազգային հանրության և, հատկապես, ֆրանսիական կողմի անտարբերությունն ու անգործությունն էր: Մեղադրելով ֆրանսիային, նա նշում է, որ վերջինիս կասկածելի, գաղտնի, երկդիմի, վարանոտ քաղաքականության հետևանքով Կիլիկիան չի կարող ազատվել իր ճգնաժամային վիճակից այնքան ժամանակ, մինչև չհասնեն միջազգային ուժերը. «Ասիկա ո՞չ միայն մեր հայերուս վերջնական կարծիքն է, այլև Կիլիկիոյ արդի կացութիւնը մօտէն ուառմասիրող,

<sup>22</sup> Սահակյան. 1970, 80:

Կիլիկիոյ վերջին սարսափելի ամիսները ապրող ամէն անկողմնակալ օտարազգիներունը»<sup>23</sup>: Հատկանշական է ընդգծել Տամատյանի նամակագրությունը՝ ուղղված դաշնակից պետությունների նախարարություններին, հայասերների և հայկական զանազան մարմիններին: Ներկայացնելով կիլիկիահայության տագնապայի վիճակը՝ Տամատյանը միջազգային օգնություն էր խնդրում: Ինքնապաշտպանությունը կազմակերպելու և որբերին ու գաղթականներին օգնելու նպատակով նա նաև դրամական օգնություն էր խնդրում, շեշտելով, որ ամեն ինչ հնարավոր չէ ստանալ ֆրանսիացիներից, եթե չինի այդ նյութական օգնությունը, ապա դիմադրությունը կնվազի և, նույնիսկ, կկանգնի<sup>24</sup>:

Ֆրանսիական երկդիմի քաղաքականության հետևանքով կիլիկիահայությունը քեմալականների հայջինջ քաղաքականության զոհ դարձավ: Առաջին զոհը դարձավ Մարաշը, այնուհետև՝ Այնթապը, Հաճընը: Կիլիկիահայությունը ստիպված էր հետ վերադառնալ՝ խուսափելով նորանոր ջարդերից, և Կիլիկիան նորից հայթափկեց: Ֆրանսիան արդարանում էր, որ չի կարող

<sup>23</sup>Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան. 2024, 251-256:

<sup>24</sup>Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան. 2024, 251-256:

«400.000-ոց նոր բանակ մը դրկել Քեմալի դեմ»<sup>25</sup>, ինչը, իհարկե, ֆրանսիական կառավարության կողմից՝ Կիլիկիան պահելու քաղաքականությունից խոյս տալու արդարացում էր, ինչն ի վերջո հանգեցրեց 1921 թ. հոկտեմբերի 20-ի թուրք-ֆրանսիական համաձայնագրի ստորագրման: Հենց 1-ին հոդվածով կողմերի միջև դադարեցվեց պատերազմական վիճակը, իսկ 3-րդ և 4-րդ հոդվածներով, փաստորեն, ֆրանսիական զորքերը պետք է հետ քաշվեին և արդյունքում Կիլիկիան անցնում էր Թուրքիայի վերահսկողության տակ<sup>26</sup>: Փաստորեն, ֆրանսիական կողմը Քեմալին սիրաշահելու համար ցրեց նաև Հայկական լեգեոնը, որը կարող էր ինչոր չափով պաշտպանել Կիլիկիահայությանը:

### **Եզրակացություններ**

Առաջին աշխարհամարտում հաղթանակած Անտանտի երկրները, որոնք, ենթադրվում էր, որ հաղթողի իրավունքով իրենց կամքն էին թելադրելու ոչ միայն Քառյակ միության երկրներին, այլև նրանց դաշնակից ու համախոհ Օսմանյան կայսրությանը, հետևողական ու վճռական չէին հայ ժողովրդին տված խոստումները կյանքի կոչելու և այդ պետության վրա համապատասխան ճնշումներ բանեցնելու հարցում: Դաշնակիցներից հատկապես Ֆրանսիան, որ ստանձնել էր Կիլիկիայի և

<sup>25</sup> Եղիայեան. 1975, 113:

<sup>26</sup> Սահակյան. 1970, 233-234:

այնտեղ բնակվող քրիստոնյաների պաշտպանությունը, պարտավոր էր քայլեր ձեռնարկել՝ Վերջիններիս պաշտպանելու քեմալականների ոտնձգություններից, բայց գործնական քայլեր չկատարեց այդ ուղղությամբ: Ավելին, կիլիկիահայության ճակատագիրը գնալով հայտնվեց ձևավորվող նոր աշխարհաքաղաքական բարդ հանգույցում: Քեմալաբոլշևիկյան հարաբերությունների մերձեցմամբ պայմանավորված, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան փորձում էին ամեն գնով սիրաշահել Մուստաֆա Քեմալին: Պարզ էր, որ Ֆրանսիան պետք է հաշվի նստեր քեմալականների հետ նաև հետագայում զարգացող իրադարձությունների շրջանակներում: Ֆրանսիական երկդիմի քաղաքականության հետևանքով կիլիկիահայությունը դարձավ քեմալականների հայացինջ քաղաքականության զոհը: Առաջին զոհը դարձավ Մարտաշը, այնուհետև՝ Այնթապը, Հաճընը: Կիլիկիահայությունը ստիպված էր հետ վերադառնալ՝ խուսափելով նորանոր ջարդերից, և Կիլիկիան նորից հայաթափվեց:

Այսպիսով, «Ազգային ուխտ» հոչակած քեմալականները, որոնք առաջ էին քաշել Շուուքիայի անկախության և ամբողջականության սկզբունքը՝ Մուտրոսի զինադադարի ստորագրման պահին գոյություն ունեցած սահմաններում չէին գնալու որևէ զիջման, ավելին, շարունակելով երիտթուրքերի հայացինջ քաղաքականությունը, պետք է իրենց իշխանության տակ վերցնեին նաև Կիլիկիան:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Անումյան Մ.** 2013, Ծանաչում և դատապարտում. Երիտ-թուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Երևան, ՀՅԹԻ, 168 էջ:

**ԳԱՁ արխիվ, ֆ. Ա. Զոպանյան, գ.9981, III բաժին, թ.1-3:**

**Գասպարյան Ռ.** 2005, Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.), Երևան, «ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 246 էջ:

**Եղիայեան Բ.** 1975, Ժամանակակից պատմութիւն Կաթողի-կոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս-Լիբանան, 948 էջ:

**Թոփուզյան Հ.** 1986, Սիրիայի եւ Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 372 էջ:

**Հ.Բ.Ը. Միութեան բարերար դերը Կիլիկիոյ մէջ, Միութիւն, Գահիրէ, 1919, № 70:**

Հայաստանը միջազգային ռիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» հրատ., 1972, 810 էջ:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան 2024, Երևան, «Լուսակն» հրատ., ԵՀՊ ՀՀՀՅԱ, Տուի, թղթապանակ «զ», Վավերագիր Հմր գ 160-զ 173, 1038 էջ:

**Հարությունյան Վ.**, Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսությունը 1902-1921 թթ. ազգային-քաղաքական գործընթացների համատեքստում, Երևան, Հեղինակային հրատ., 2023, 365 էջ:

**Մարության Ա.** 2023, Սսի կաթողիկոսության կալվածք-

ները և թուրքական իշխանությունների կողմից դրանց բռնազավթումը, «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սիսից մինչև Անթիլիաս», գիտաժողովի հոդվածների ժողովածու, կազմ.' Ա. Հարությունյան, Երևան, էջ 278:

Յուշամատեան Մուսա լերան 1970, կազմ.' Մ. Գուշակեան, Պ. Մադուրեան, Ճեակէ Մուսայի հայրենակցական միութեան հրատ., Պէյրութ, 878 էջ:

**Սահիալյան Ռ.** 1970, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 328 էջ:

**Кемаль М.** 1929, Путь новой Турции, т. 1, Москва, изд. «Литиздат», 480 с.

**Brémond E.** 1921, La Cilicie en 1919-1920, Paris, 76 р.

**Brémond E.** 1977, The Brémond Mission: Cilicia in 1919-1920, “The Armenian review”, Boston, vol. 29, № 4-116, p. 339-372.

**Мане К. Конинян,** Институт Истории НАН РА, младший научный сотрудник, Проблемы защиты прав армян Киликии в 1918-1921 гг.

### Резюме

После Мудросского перемирия державы Антанты, в частности Франция, обещали армянским беженцам, нашедшим убежище в Сирии и Месопотамии, благоприятные условия и призывали их вернуться в Киликию. Константинополь и Киликия, где были размещены войска союзников, были относительно безопасными местами, и армянские изгнанники могли надеяться на защиту от физического уничтожения. Союзники предоставили гарантии безопасности для армян,

возвращавшихся в Киликию, которые были подтверждены секретным Мудросским соглашением о перемирии, подписанным 20 февраля 1919 г. между англо-французскими войсками и турецким правительством. Согласно этому соглашению, союзники заверили изгнанных армян, что они могут вернуться в свою страну без каких-либо ограничений и им пообещали вернуть их имущество в случае репатриации.

Для организации возвращения армян в Киликию были созданы армянские национальные органы, которые усилиями католикоса Саака Хапаяна пытались восстановить армянскую культурную жизнь и экономику. Однако позже выяснилось, что французские власти фактически не предприняли никаких шагов для защиты киликийских армян, и их судьба стала частью более сложной общественно-политической ситуации. Жестокая политика кемалистов заставила Францию пересмотреть свои отношения с ними. Французская дипломатия предприняла шаги по прекращению боевых действий в Киликии и подписанию соглашения с Анкарой. В результате двуличной политики Франции армяне Киликии стали жертвами проармянской политики кемалистов (кемалитов). Армянам Киликии пришлось вернуться, избежав новых погромов. Чтобы добиться расположения Кемаля, французская сторона отказалась от различных обещаний армянам Киликии, нарушив их права.

**Ключевые слова:** Мудросское перемирие, армянские беженцы, Армянский легион, Киликия, Франция, Мустафа Кемаль, Жорж Пико.

**Mane K. Koninyan, Institute of History of the NAS RA, Junior Researcher, The Problems of the Protection of the Rights of the Armenians of Cilicia in 1918-1921**

**Summary**

After the Armistice of Mudros, the Entente powers, especially France, promised very favorable conditions to the Armenian refugees who had taken refuge in Syria and Mesopotamia urging them to return to Cilicia. Constantinople and Cilicia, where the Allied troops were stationed, were relatively safe places. Armenian exiles could feel safe from physical annihilation there. The Allies had given the Armenians returning to Cilicia guarantees of safety of life, which were confirmed by the secret Mudros Armistice Agreement signed between the Anglo-French troops and the Turkish government on February 20, 1919. According to this agreement, the Allies assured the exiled Armenians that they could return to their country without any restrictions and gave guarantees that in case of return, the property of the repatriates would be returned to them.

In order to organize the return of the Armenians of Cilicia, Armenian national bodies were formed in Cilicia and with the efforts of Catholicos Sahak Khapayan, they tried to restore the Armenian cultural life and economy. Later, it became clear that the French authorities did not actually take any steps to protect the Armenians of Cilicia, and their fate gradually emerged within the framework of a complex new socio-political system. The brutal policies of the Kemalists forced France to reconsider its relations with them. French diplomacy had taken steps to end the hostilities in Cilicia and sign an agreement with Ankara. As a result of the double-edged French policy, the Armenians of Cilicia became victims of the pro-Armenian policy of the Kemalists. The

Armenians of Cilicia had to return avoiding new pogroms. In fact, in order to win Kemal's favor, the French side denied various promises to the Armenians of Cilicia and violated their rights.

***Key words:*** Armistice of Mudros, Armenian refugees, Armenian Legion, Cilicia, France, Mustafa Kemal, Georges Picot.

**SEDA D. OHANIAN**

*Institute of History of the NAS RA, Ph.D in History*

dajad.seta@gmail.com

ID 0009-0005-2139-2968

DOI:10.59523/1829-4596.2024.2(29)-147

**EPISODES FROM THE CULTURAL ACTIVITIES OF  
THE IRAQI-ARMENIAN COMMUNITY IN THE 20<sup>th</sup>  
CENTURY: THEATER AND MUSIC\***

**Key words:** Iraq, Nahr Omar, Baghdad, Basra, Levon Shaghoian, Armenian Culture, Armenian Prelacy.

**Introduction**

It is now a confirmed fact that Armenians have been living in Mesopotamia – modern Iraq – since time immemorial and were a very vibrant community. However, due to certain socio-economic circumstances, they almost disappeared from the scene of this centuries-old history of the country.

It is to be noted that the activities of the communities formed in foreign countries were not limited only to the preservation and development of their lives, but through interrelations and direct contacts with the peoples of different host countries, they tried their utmost to acquaint them with the centuries-old past of our people, the achievements of the present in the cultural and scientific fields, and to mutually get acquainted with the cultural traditions of the people of the given country, as well as with historical national figures, fateful events and their influence on

---

\*Submitted on 07.XI.2024, reviewed on 10.XI.2024, accepted for publication on 15.XII.2024.

the way of life of our people in the given country. Therefore, the Armenian cultural manifestations in the host countries, such as dance troupe, choir, theater troupe, literature correspond to the local possibilities and the demographic picture of the Armenian people.

The present article briefly touches upon the cultural activity of the Iraqi Armenian community's theatrical as well as musical creation and its development, especially after the emigration of the Western Armenians to Iraq.

## Theater

